Հիմնադրամի ղեկավարությունն ավանդական հեռուստամարաթոնը փոխարինել է բարեգործների հետ զրույցների շարքով՝ սյուժեներով, որոնք պատրաստել է Հանրային հեռուստատեսությունը: Համայն հայությանն ապավինելու փոխարեն, այսօր հիմնադրամը փորձում է ներդրողներ գտնել՝ ուղիղ աղբյուրներ, որոնք փող կտան ծրագրերի համար:

Կարդացեք՝ էջ 4



Նիկոլ Փաշինյանի բերած բոլոր «փաստարկներն» ու հախուռն «նետարձակումներն» այնքան ողբալի էին, այնքան պարզունակ, որ թվում էր՝ ԱԺ ամբիոնին է մոտեցել «մահվան» դատապարտված հանցագործը, որին վերջին խոսքի իրավունք են տրամադրել, ու նա այդ պահին ամեն ինչ անում է՝ արդարացվելու համար: Իսկ հրաշք տեղի չունեցավ:

Կարդացեք՝ էջ 5



Նախկին նախարար Արայիկ Հարությունյանը մի ելույթում ասաց. «Այն ժամանակ ես ԿԳ նախարար էի, ՄՍ-ն դեռ չկար»: Չլինի՞ կառավարությունում ՄՍ-ն մսի տեղ են դրել: Թերթեր փակելով՝ ավելի հեռուն են գնում: Զգույշ եղեք, տիկնայք ու պարոնայք, որ հանկարծ հերովդես չդառնաք, չնույնանաք գիր ու գրականություն ճնշողներին:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 199 (4100), 6 դեկտեմբեր, շաբաթ, 2025

www.hraparak.am

«Կիրակի օրը՝ դեկտեմբերի 7-ին, Գյումրու Սուրբ Յոթ վերք եկեղեցում կմասնակցեմ սուրբ եւ անմահ պատարագի»,- երեկ ազդարարեց Փաշինյանը: Մեկ օր առաջ էլ ասել էր, որ պատարագների գնում է մի պայմանով, որ այնտեղ Վեհափառի անունը չհնչի, իսկ այդ հարցը լուծելուն լծվել է ԱԱԾ-ն: Շիրակի թեմում 24 քահանա է ծառայություն մատուցում: Տեղեկացանք, որ նրանցից ոչ մեկը չի համաձայնել պղծել եկեղեցական արարողակարգը, ուստի հնարավոր է, որ Փաշինյանն իր պատարագիչին հետը տանի Գյումրի: Յոթ վերք եկեղեցու հոգեւոր հովիվ Հուսիկ քահանա Գրիգորյանը երեկ մեզ ասաց, որ դեռ պետք է քննարկեն՝ Շիրակի թեմում որեւէ հոգեւորական չի՞ համաձայնել զեղչել Վեհափառ տիրոջ եւ թեմի առաջնորդի անունը: Ինչ վերաբերում է իրենց թույլ չտալուն եւ դրսից բերված հոգեւորական բերելուն, ասաց. «Տարբեր ժամանակներում եղել են եպիսկոպոսներ, քահանաներ, որոնք ցանկություն են ունեցել ոչ իրենց թեմի տարածքում գտնվող եկեղեցում պատարագ մատուցել, բայց այդ դեպքում առաջնորդից թույլտվություն պետք է ստանան»: Այսինքն, Միքայել սրբազանը պետք է թույլ տա: Քահանան ասաց. «Որքանով ինձ է հայտնի, նման թույլտվություն չկա: Եթե ինձ բռնի հանեն եկեղեցուց, նշանակում է՝ բռնազավթելու նպատակ կա: Դա քրեական հոդված է եւ պատասխանատվություն է ենթադրում»: Հոգեւորականները չեն պատրաստվում ինքնակամ լքել եկեղեցին, իսկ հավատավոր հոտն «իր գնահատականը պիտի տա այս գործընթացին»:

Եկեղեցու եւ բարձրաստիճան հոգեւորականների դեմ իշխանության տեռորն անգամ Նիկոլ Փաշինյանի երբեմնի թիմակից, մոլեռանդ աթեիստ Հովիկ Աղազարյանին է տարել սրբազանների դուռը: Սրբազաններին այցելած մեկը երեկ մեզ պատմեց, որ Աղազարյանն էր իրենից առաջ այցելել երկու սրբազաններին՝ «ԱԱԾ պադվալում»: Ընդ որում, սա առաջին այցը չէ, նախկինում քանիցս այցելել է Միքայել սրբազանին, իսկ երեկ՝ եւ Միքայել, եւ Բագրատ սրբազաններին: Հիշեցնենք, որ երբ դեռ Աղազարյանը ՔՊ-ական էր, ակտիվորեն քննադատում էր Սրբազան շարժումը, այժմ, փաստորեն, իր աջակցությունն է հայտնում իշխանության կողմից հալածվող հոգեւորականներին: Մեր աղբյուրը պատմեց նաեւ, որ երեկ սրբազանների հանդիպումը տեղի չի ունեցել նրանց խցում՝ պատգամավորներն իրավունք ունեն կալանավորվածների կեցության պայմաններին ծանոթանալ, ուստի նրանց ուղեկցում են խուց: Երեկ տեսակցությունները կայացել են առանձնացված սենյակում, քանի որ Արշակ սրբազանին տեղափոխել են սրբազանների խուց, իսկ նրան զրկել են տեսակցություններից:

Ձեք խուսափելու

ԱԱԾ տնօրենի, Քննչական կոմիտեի նախագահի, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի, գլխավոր դատախազի, քննիչների, դատավորների եւ, առհասարակ, բոլորի համար պետք է Սահմանադրության եւ օրենքների հետ կապված մի մեծ սեմինար կազմակերպել, Փաշինյանի սիրած բառով՝ թինգ-թանգ, որ հասկանան՝ վերադասի ապօրինի հրամանները չի կարելի կատարել, վերադասի հրամաններն իրենց չեն ազատում պատասխանատվությունից: Դատավոր Մասիս Մելքոնյանը պետք է իմանա, որ իր տված ապօրինի կալանքների որոշումների վերաբերյալ հարուցվելիք վարույթները վաղեմության ժամկետ չունեն, ինքը, վաղ թե ուշ, դրանց համար պատասխան է տալու: Նույնը՝ Քննչական կոմիտեի ղեկավարը, որտեղ քննված գործերի մի պատկառելի մասը քաղաքական հիմքեր ունեն, զրո ապացույցներ եւ ակնհայտ ապօրինի են՝ ի սկզբանե: Բայց հատկապես ԱԱԾ տնօրենը պետք է հասկանա, որ նախօրեին Գյումրու հոգեւորականներից մեկի՝ Տեր Ռուբենի հարցազրույցները, Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները միանգամայն բավարար են իր եւ իր ենթակաների նկատմամբ բազում քրեական գործեր հարուցելու համար՝ լիազորությունների գերազանցման, ապօրինի հրահանգներ կատարելու, քաղաքական նկատառումներից ելնելով՝ հալածանքների գործիք դառնալու համար: Բայց արդարադատության կայացումը սրանով չի ավարտվելու: Եթե մի օր Հայաստանում հաստատվի օրինական իշխանություն եւ օրենքի իշխանություն, ապա բոլորը՝ մինչեւ վերջին ՀՀ քաղաքացին, պատասխան են տալու այս ամենը տեսնելու, լռելու, չմիջամտելու, չկանխելու համար: Ինչպես ստալինյան դարաշրջանի ավարտից հետո երկար տարիներ փնտրում գտնում էին այդ ռեպրեսիաներին այս կամ այն կերպ մասնակցած, մատնագրեր գրած եւ անգամ կուսակցական ժողովների ժամանակ իրենց գործընկերների դեմ քվեարկած մարդկանց եւ նույնիսկ նրանց սերունդներին:

Տեւական քննարկումներից հետո ՔՊ-ում կարծես նախնական որոշում է կայացվել, թե ինչպես է ձեւավորվելու 2026 թ. նախընտրական ցուցակը: Գրել ենք, որ Փաշինյանը շատ կուզենար միանձնյա գրել ցուցակը, բայց ռիսկի չի գնում՝ հասկանալով, որ հետո որոշ առանցքային դեմքերի պետք է բացատրի, թե ում ինչու է այդ հորիզոնականում գրել: Իսկ քանի որ հիմա ՔՊ-ում խմբավորումներ ու թեւեր կան, ապա արդյունքում կարող է իր դեմ բունտ ծագել: Ուստի փորձում է կուսակտիվին կամաց հանգեցնել այն մտքին, որ նրանք իրեն խնդրեն՝ կազմել ցուցակը: Բայց հինգշաբթի նախաձեռնող խմբի նիստում մեծամասնության տեսակետը եղել է այն, որ ցուցակը պետք է ընտրի արտահերթ համաժողովը, այսինքն՝ 1000-ից ավելի պատվիրակները: Տեխնիկական մյուս հարցերը կորոշի վարչությունը, մասնավորապես, 380 հոգանոց ցուցակից քանի հոգու պետք է ընտրեն, որ հորիզոնականից հետո վարչությունը կարող է խմբագրումներ անել եւ այլն:

ՏԱՎՈՒՇՈՒՄ ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ՝ ՀԱՍՆՈՒՄ Է ՕՏԱՆԱՎԱՆ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, վարչապետի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը, հոկտեմբերի 26-ին Իջեւանից հարյուրավոր կիլոմետրեր անցնելով, հասել էր Արագածոտնի մարզի Օհանավան գյուղ, որպեսզի Հովհաննավանքում ներկա գտնվեր Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ, կարգալույծ եղած քահանա Տեր Արամի՝ Ստեփան Ասատրյանի մատուցած պատարագին: Իր հետ նաեւ մի խումբ իջեւանցի էր տարել, որ աջակցեն եկեղեցին ասպատակելու գործում: Իջեւանի հավատացյալ բնակիչները մեզ ասացին, որ իրենք կիրակի օրերը Հայկ Ղալումյանին երբեւէ Իջեւան քաղաքի կամ Տավուշի մարզի այլ եկեղեցիներում պատարագի մասնակցելուց չեն տեսել: Մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել՝ 2025 թվականին քանի՞ անգամ, ե՞րբ, ո՞ր օրը, Տավուշի մարզի ո՞ր եկեղեցում, ո՞ր քահանայի ձեռամբ մատուցված պատարագին է ինքը ներկա գտնվել: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Տեղեկացնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն»: Թե երբվանից է պատարագին մասնակցելը կամ չմասնակցելը համարվում անձնական տվյալ, չհասկացանք, բայց պատասխանից պարզ դարձավ, որ իջեւանցիները ճիշտ են ասում՝ մարզպետն իր ղեկավարած մարզում պատարագների չի մասնակցում, նա ուղղակի Փաշինյանի կողմից անօրինական շրջիկ պատարագների մասսովկայի մաս է կազմում:

ՆԱՄԱԿ

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ ՆԱՐԵԿ ՍԱՄՍՈՆՅԱՆԻ ԿՆՈՋ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԷՄԱՆՈՒԵԼ ՄԱԿՐՈՆԻՆ

Պարոն նախագահ

Ես քաղբանտարկյալ Նարեկ Սամսոնյանի կինն եմ: Իմ ամուսնուն արդեն երկրորդ անգամ Փաշինյանի ռեժիմը բանտ է ուղարկել ընդդիմադիր խոսքի եւ քննադատության համար, որում հայհոյանք էլ չի եղել, չնայած որ Հայաստանի Հանրապետությունում տարիներ առաջ, Արեւմուտքի պարտադրմամբ, ծանր վիրավորանքն ապաքրեականացվել է:

Իմ ամուսինը YouTube-ով հեռարձակվող եւ օրեցօր մեծացող լսարան ունեցող հայտնի «Իմնեմնիմի» քաղաքական փոդքասթի համահեղինակն ու վարողն է: Եվ հիմա իր դեմ հարուցվել է քրեական գործ՝ խուլիգանության հոդվածով, քանի որ փոդքասթի թողարկման ընթացքում ամուսինս անդրադարձել է իր եւ մյուս վարող Վազգեն Սաղաթելյանի հասցեին իշխանականների, ՔՊ-ական պատգամավորների հանրային վիրավորանքներին եւ ԱԺ խոսնակ Ալեն Սիմոնյանին իր պատասխան խոսքն ուղղելիս օգտագործել է «հետույք» բառը: Ըստ հայ իրավապահների, ՀՀ ԱԺ խոսնակի Facebook-յան հայհոյանք պարունակող կեղտոտ գրառմանն ուղիղ եթերում անդրադառնալիս ամուսնուս արտաբերած «հետույք» բառն իր մեջ խուլիգանության հանցակազմ է պարունակել:

Բանն այն է, որ բանտարկվելուց օրեր առաջ Նարեկն ու Վազգենը ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին էին հյուրընկալել «Իմնեմնիմի» փոդքասթին եւ ուղիղ եթերում 7 ժամ անկեղծ եւ ազատ զրույց ունեցել նրա հետ: Այդ թողարկման ավարտին արդեն՝ լուսադեմին, Նիկոլ Փաշինյանը մի քանի վրդովված ֆեյսբուքյան գրառումներ էր կատարել, որին միացել էին նաեւ իր թիմակիցները եւ կեղտոտ բառապաշարով բազմաթիվ վիրավորական գրառումներ եւ մեկնաբանություն էին գրել փոդքասթ վարողների եւ նախագահի հասցեին: Հենց այդ ժամանակ էլ ԱԺ խոսնակն իր հերթական ֆեյսբուքյան գրառման մեջ իմ ամուսնուն եւ Վազգենին անվանել էր «շան լակոտներ», որի անհամեմատ թույլ պատասխանը՝ «հետույք» բառի կիրառմամբ, ստացել էր հետագա թողարկման ընթացքում, ինչի համար էլ դիմել էր իրավապահներին՝ ամուսնուս եւ Վազգենի դեմ քրեական գործ հարուցելու համար, իսկ ռեժիմի իրավապահները, առանց օրենքի ու օրինականության մասին մտածելու, ստանձնել են քրեական գործ սարքելու պարտականությունը, եւ հաջորդ օրը ԱԱԾ ԱԼՖԱ ջոկատի դիմակավորված ծառայողները ներխուժել են մեր տուն, իմ եւ մեր անչափահաս դուստրերի աչքի առաջ խուզարկել եւ ամուսնուս ձեռքերը ոլորելով, Փաշինյանի սիրելի եղանակներով բերման ենթարկել, չնայած որ նա դիմադրություն ցույց չէր տալիս եւ հետեւում էր իրավապահների բոլոր պահանջներին:

Նույն ժամին նույն սցենարը տեղի է ունեցել Վազգեն Սաղաթելյանի տանը, ինչպես նաեւ՝ Անտիֆեյք լրատվականի գրասենյակում: Լրատվականից անհիմն առգրավել են ամբողջ տեխնիկան. բոլոր համակարգիչները, տեսախցիկները, տեսանկարահանող դրոնները, միկրոֆոնները եւ ձայնագրող սարքերը, շտատիվները, գրասենյակի անվտանգության տեսախցիկների DVR սարքը, մարտկոցները, հիշողության կրիչները, լիցքավորիչները, էներգաբանկերը, ուղիղ եթերի հեռարձակման համար անհրաժեշտ բոլոր սարքերը, եթերային ձայնն ու ձայնի մաքրությունն ապահովող սարքերը, լարերը:

Լրատվականին իր գործունեությունն ապահովող տեխնիկայից զրկելը միայն մեկ նպատակ էր հետապնդում՝ դադարեցնել լրատվականի գործունեությունը եւ ուղիղ նյութական վնաս հասցնել:

Այդ ամբողջ տեխնիկան ձեռք էր բերվել համակիրների շնորհիվ, եւ, բարեբախտաբար, կրկին հայտնվեցին աջակիցներ, որոնք իրենց անձնական միջոցներով մեկ օրում լրատվականին ապահովեցին անհրաժեշտ տեխնիկայով, որպեսզի կարողանա շարունակել իր գործունեությունը, եւ ընդդիմադիր խոսքը կրկին հնչի: Պարզից էլ պարզ է, որ սա միջոց է ՀՀ-ում ընդդիմադիր խոսքը լռեցնելու եւ մյուս ընդդիմադիրներին այս օրինակով վախեցնելու համար:

Իմ ամուսինն ու Վազգենը նոյեմբերի 13-ից ապօրինի ազատազրկված են եւ գտնվում են «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում: Իրենց տեսակցությունները փակ են, ասես մարդ են սպանել կամ հայրենիքը թշնամուն հանձնել՝ սեփական շահի համար:

Հետեւելով Ֆրանսիայում գործունեություն ծավալող լրատվականների աշխատանքին, տեսնելով, թե ինչպիսի անկաշկանդ բառամթերք են կիրառում թե՛ քաղաքական, թե՛ ժամանցային հաղորդումներում, տեսնելով, որ եթերային խոսքում օգտագործվող հայհոյանքը՝ անգամ Ձեր հասցեին, չի ընկալվում որպես խուլիգանություն եւ մարդկանց բանտ ուղարկելու առիթ չի դառնում, չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես եք Փաշինյանի ձեռքը սեղմում՝ լավ տեսնելով, թե ինչպես է նա ռեպրեսիվ մեթոդներով քաղաքական հետապնդումների ենթարկում իր ընդդիմախոսներին եւ ոտքերը սրբում իրական արդարադատության վրա:

Արդեն մեկ անգամ միջազգային կառույցներն արձանագրել են, որ իմ ամուսինն ու «Իմնեմնիմի» փոդքասթի մյուս վարող Վազգեն Սաղաթելյանն ազատազրկման են ենթարկվել իրենց փոդքասթում կառավարությանը եւ Նիկոլ Փաշինյանին քննադատելու համար: Այս ձեւակերպումը կարող եք գտնել Freedom House-ի եւ Amnesty International-ի 2024 թ. զեկույցներում: Freedom House-ի զեկույցում անգամ հրապարակվել է ամուսնուս գազանաբար բերման ենթարկելու կադրերի հղումը: Լրագրողների եվրոպական ֆեդերացիան եւս դատապարտել է ՀՀ իշխանությունների կողմից քրեական օրենսդրության չարաշահումը՝ մամուլի եւ խոսքի ազատությունը ճնշելու համար: Տեղական կառույցները եւս դատապարտել են իշխանությունների այս գործելաոճը եւ պահանջել անհապաղ ազատ արձակել Նարեկին եւ Վազգենին: Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոնը եւս զեկույց է կազմել «Իմնեմնիմի»-ի գործի վերաբերյալ: Քաղաքական իրավունքների հայկական կենտրոնը ծավալուն զեկույց էր կազմել Նարեկի եւ Վազգենի նախորդ եւ ներկայիս քրեական հետապնդումների մասին:

Իմ ամուսնու եւ Վազգենի դեմ իշխանությունների կողմից հարուցված քրեական հետապնդումները մարդու իրավունքների, ազատ խոսքի իրացման կոպտագույն խախտումներ են, եւ նրանք ապօրինաբար են հետապնդվում: Ասվածն ապացուցելու է գալիս այն հանգամանքը, որ ՀՀ-ում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արդեն մեկ անգամ արդարացման վերդիկտ է կայացրել «Իմնեմնիմի»-ի նախորդ նույնաբովանդակ քրեական գործով:

Դիմում եմ Ձեզ եւ ոչ թե Հայաստանի Հանրապետությունում Ձեր երկրի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դեկոտինյիին, քանի որ վստահ չեմ, որ Ձեր դեսպանը քաղաքականապես չեզոք է: Տեղեկացնում եմ Ձեզ, որ իմանաք՝ ում եք պաշտպանում, եւ Ձեր պաշտպանության հետեւանքով ինչեր են տեղի ունենում Հայաստանում: Դիմում եմ Ձեզ՝ ակնկալիքով, որ հնարավորության դեպքում Փաշինյանին ասեք, որ իր այս գործելաոճը ժողովրդավարության հետ աղերս չունի եւ տանում է դեպի տոտալիտարիզմ:

Կարծո՞ւմ եք, որ հանուն գերտերությունների միջեւ ընթացող հեգեմոնիայի հասնելու պայքարում հաղթելու, արժե աչք փակել Փաշինյանի տոտալիտար հակումների վրա եւ չտեսնել, որ նա ոչ թե ժողովրդավարական արժեքների կրող է, այլ՝ դասական բռնապետ, որին թույլատրված է միայն գովերգել, իսկ նրանք, ովքեր կհանդգնեն քննադատել, պետք է ուղարկվեն բանտեր: Ի տարբերություն Քադաֆիի՝ Փաշինյանը միայն ցուցարարների չի սպանել... դեռ:

Նարեկ Սամսոնյանը քաղաքական բանտարկյալ է, բանտարկված սեփական երկրում, ով ռոմանտիկորեն հավատում է ժողովրդավարությանն ու ժողովրդավարական արժեքներին:

Լուսինե ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ո՞Վ Է ՆՐԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎԵԼ՝ ԱԱԾ-ԻՆ ԲԱՑԱՀԱՅՏ ՈՒՂՂՈՐԴԵԼ

Ձեր զրուցակիցը քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանն** է:

- Նախօրեին Փաշինյանը խոստովանել է, որ իր մասնակցությամբ կատարվող պատարագներից առաջ նախապես քահանաների հետ համաձայնության են գալիս, որ Վեհափառի անունը չարտաբերեն: Ինչո՞ւ է Փաշինյանը նման հայտարարություններ անում, եւ որոշ հոգեւորականներ ինչո՞ւ են նրան ենթարկվում:

- Այստեղ նախ պետք է մեկնաբանություն տան իրավաբանները, ինչից հետո՝ իրավապահ մարմինները Ինչու. որովհետեւ պատարագների կարգը, տեքստը, օրացույցը եւ այլն, հաստատվում են Հայ առաքելական սուրբ եկեղեցու կողմից հաստատված համապատասխան աշխատանքի շրջանակներում: Ըստ ՀՀ գործող Սահմանադրության, Հայ առաքելական եկեղեցին եւ պետությունն իրարից անջատ են: Նիկոլ Փաշինյանը չի կարող իր ֆունկցիան, որպես վարչապետ, համարել նաեւ Հայ առաքելական եկեղեցու գործերին միջամտելը, նա չի կարող որոշել, թե որ պատարագի ժամանակ ում անունը պետք է հնչի, նա չի կարող նման հարցեր որոշել: Եթե շատ խորանանք, ապա այս օրենքները նույնիսկ Գարեգին Բ-ն չի սահմանել, ոչ էլ անգամ նրան նախորդած կաթողիկոսները, ոչ էլ, առավել եւս, Նիկոլ Փաշինյանը: Վստահ եմ, որ այս ամենին իրավապահները մի օր գնահատական են տալու: Մենք այստեղ առերեւույթ տեսնում ենք սահմանադրական կարգի տապալում: Այս մարդիկ քայլեր են ձեռնարկում, որոնք դեմ են օրենքներին: Նա նաեւ խոսել է ԱԱԾ-ի գործառույթների մասին: Ո՞վ է նրան իրավունք տվել ԱԱԾ-ին բացահայտ ուղղորդել եւ հպարտորեն հայտարարել այդ մասին: Ինչ վերաբերում է նրան, թե ինչու են քահանաները ենթարկվում նրան, ապա շատ հստակ է: Ոչ ոք սուրբ չէ, մարդկանց վրա կոմպրոմատներ են հավաքում եւ շանտաժի ենթարկում: Երբ մարդը կառավարչական գործառույթ է իրականացնում, անպայման գտնվում են մարդիկ, ովքեր որոշակի դժգոհություններ են ունենում: Դա շատ մարդկային երեւույթ է: Այժմ Փաշինյանն այդ մարդկային երեւույթը փորձում է օգտագործել կաթողիկոսի դեմ: Ցավալի է, բայց փաստ է: Այո, կան մարդիկ, ովքեր իսկապես նեղացած են Գարեգին Բ-ից, կան նաեւ մարդիկ, որոնց իսկապես շանտաժի են ենթարկում:

- Հայտարարեց, որ թոշակները բարձրացնելու է...

- Մի կողմ թողնենք, որ այս մարդը 2018-ին իշխանության է եկել սոցիալ-տնտեսական բնույթի խոստումներով, խոստացել էր, որ մի շարք խնդիրներ է լուծելու, արդարություն է հաստատելու եւ այլն: Ինձ համար տարակուսելի է, թե ինչու մինչեւ հիմա թոշակների բարձրացման մասին կոնկրետ չի խոսում հայաստանյան ընդդիմությունը: Ինչո՞ւ հստակ չեն ասում, որ եթե հունիսի 7-ից հետո գան իշխանության, հուլիսի 1-ից թոշակները բարձրացնելու են 50 տոկոսով:

- Նարեկ Կարապետյանը խոսել է թոշակների բարձրացման մասին:

- Պետք է կոնկրետ խոսել՝ օրով, չափով: Տեխնոլոգիական առումով սա շատ ճիշտ քայլ կլիներ: Ասեմ ավելին՝ Վրաստանում, երբ Իվանիշվիլին իշխանության էր գալիս, խոստացել էր, որ Վրաստանի հատուկ ծառայությունների կողմից, տարիներ շարունակ Սահակաշվիլու ուղիղ հրահանգով հավաքված կոմպրոմատները՝ սեռական բնույթի, ոչնչացնելու է: Դա նաեւ բերեց նրան, որ Իվանիշվիլու նկատմամբ լոյալություն նկատվեց ոչ միայն ընդդիմադիր շրջանակների կողմից, այլեւ՝ շատ այլ զանգվածների: Փաշինյանն իր ամեն ելույթով ժողովրդի հետ աշխատելու առիթ է տալիս: Մնում է, որ այլընտրանքային քաղաքական ուժերն այդ ամենից ճիշտ հետեւություններ անեն եւ արագ կողմնորոշվեն:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*«Հրապարակի» զրուցակիցն է Մայր Աթոռի միաբան **Ռուբեն վարդապետ Զարգարյանը**:*

ԱՅՆ, ԻՆՉ ԼԻՆԵԼՈՒ Է ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, ՊԵՏԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՄԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՎԹՈՒՄ Է

- Դատարանը երկու ամսով կալանավորեց Արշակ սրբազանին: Սպասելի՞ էր նման որոշումը Ձեզ համար:

- Այո, սպասելի էր:

- Իսկ ինչո՞վ եք պայմանավորում Արշակ սրբազանին թիրախավորելը:

- Պարզ չէ՞, չե՞ք տեսնում՝ ինչ է կատարվում: Մենք այսօր քաղաքակրթական աղետի մեջ ենք՝ քաղաքակրթական աղետի՝ որպես պետություն, որպես հասարակություն, որպես ազգ, որպես ժողովուրդ: Եվ այս ամեն ինչից էլ ածանցվում են հակաժողովրդական, հակաիրավական, հակասոցիալական, հակաբարոյական, հակահոգեւոր, հակաբնական բոլոր այդ դրսեւորումները: Մենք այս վիճակի մեջ ենք: Հիմա կհարցնեք՝ լուծում, ես լուծում չունեմ: Լուծում ունենայի՝ կձեռնարկեի ինչ-որ մի բան:

- Վերջին օրերին տարբեր հոգեւորականների, եպիսկոպոսների կողմից հայտարարություններ են հնչում՝ ի սատարումն Վեհափառի, բայց որոշ թեմերի քահանաներ իրենց հավատարմության հավաստիքն առ Հայրապետ չեն հայտնել...

- Դա դեռ չի նշանակում, որ իրենք հավատարիմ չեն: Եթե հիշատակություններն արվում են, դրանով ինչ են անում իրենք: Խոստովանում են, որ բարձրաձայնված հոգեւորականներից Ամենայն հայոց հայրապետն է, թեմի առաջնորդն է եւ պատարագիչ քահանան է: Բարձրաձայնում են նախեւառաջ եկեղեցու այս հոգեւորականների հավատքի եւ դավանանքի ուղղափառությունը, իրար հետ հաղորդակցությունը՝ հաղորդության միությունը, եւ երրորդը՝ հավատարմությունն ու հնազանդությունը նվիրապետական կարգի մեջ վերեւի իշխանություններին: Այսինքն, առաջնորդը՝ Վեհափառին, քահանան՝ առաջնորդին եւ Վեհափառին: Խոշոր հաշվով, սա եկեղեցու միասնության, միության մասին է: Եթե հիշատակում ես, նշանակում է՝ այդ երեքն անում ես՝ ուղղափառ ավագի խոստովանություն, հաղորդության միության հռչակում, եւ ում իշխանության տակ ես, եւ հավատարմություն ու հնազանդություն: Եթե չես անում, նշանակում է՝ չես ճանաչում նրա ուղղափառությունը, հայտարարում ես քեզ հաղորդությունից դուրս եւ որ այլեւս չես ենթարկվում այդ իշխանությանը: Հիմա այն, ինչը որ կատարվում է մեր կիրակիից կիրակի՝ վերջին շաբաթվա ընթացքում, եկեղեցաբանական անհեթեթություն է, ինչո՞ւ, որովհետեւ չի հնչում Վեհափառի անունը քահանայի կողմից՝ այն դեպքում, երբ որ իր առաջնորդն այնտեղ կանգնած է: Եվ երբեմն զեղչում են հենց նույն պատարագիչ քահանայի անունը: Սա եկեղեցաբանական անհեթեթություն եւ անգրագիտություն է: Եթե միտումնավոր է արվում, շատ ավելի վատ: Ուրեմն, եթե չես հնչեցնում, նշանակում է՝ հայտարարում ես, որ չես ճանաչում այլեւս քո առաջնորդի ուղղափառությունը, հաղորդություն չես կիսում այլեւս իր հետ եւ այլեւս չես հնազանդվում: Բայց մեկ էլ տեսնում ես, որ հաջորդ կիրակի այդ նույն մարդիկ հնչեցնում են: Դա ինչ է նշանակում, որ այս եկեղեցաբանական անհեթեթ աղճատումն արվում է մեկ պատճառով, որ այնտեղ կանգնած է ինչ-որ մեկը, որը հակասահմանադրական ճանապարհով միջամտում է եկեղեցու գործերին: Այսքան բան:

- Այդ՝ «ինչ-որ մեկը» երեկ հայտարարեց, թե կասկածներ ունի, որ Ամենայն հայոց հայրապետն ինչ-որ երրորդ երկրների կողմից կարող է հավաքագրված լինել, նույն թեզն իշխանամետ լրատվամիջոցում առաջ էր տանում Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

- Տեսեք, ես չեմ ուզում մեկնաբանել այն, ինչը որ այդ մարդը կրկնում է տարբեր ամբիոններից: Ինքը թող պատասխան տա բոլոր այն լիազորություններով եւ պարտականություններով օժտված իր առաքելության համար, որը ձախողել է տոտալ՝ վերից վար: Ինքը պիտի պատասխան տա մեզ, ոչ թե մենք՝ իրեն:

- Գյումրիում չկարողացան քահանա գտնել, որ կհամաձայներ Փաշինյանի պայմաններով պատարագ մատուցել: Դրական հույսեր չի՞ ներշնչում սա:

- Այն, ինչը որ հիմա փորձ է արվում անել առաջիկա կիրակի օրը, նշանակում է պետական ահաբեկչությամբ եկեղեցու զավթում՝ իրավունքների յուրացում, որն իրենցը չէ, ահաբեկչություն, մարդկանց վախեցնում են, ստիպում են, պարտադրում են, որի իրավունքը Սահմանադրությամբ իրենք չունեն: Իսկ ինչո՞ւ Սահմանադրությունը չի պահվում. որովհետեւ բոլոր այն պետական մարմինները, որոնք երաշխավորում են մեր երկրում օրինապահությունը, սահմանադրականությունը, իր գրպանում են: Սահմանադրությունը, ինչպես ասացի, լավ չեն ընդունել: Ելույթից հետո «հայաստանցիները» փորձել են գործընկեր խմբակցության պատգամավորներին պարզաբանումներ տալ, թե միտումնավոր չէր ՀՀԿ-ի թեման արծարծվել, ուղղակի Աննային հունից հանել են, նա էլ չի կարողացել տիրապետել ու չափը գուցե անցել է: Սակայն երեկվա զարգացումները ցույց տվեցին, որ արդարացումները հիմնավոր չեն համարվել, եւ սկսվել է միջթիմային նոր հրաձգություն: Երեկ խորհրդարանում ճեպազրույցների ժամանակ **Հայկ Մամիջանյանը** ոչ թե շրջանցեց այդ մասին իրեն ուղղված հարցը, այլ հավուր պատշաճի «աբառոտկա ֆռռաց»: «Եթե խոսել, պետք է խոսել ամբողջական, որովհետեւ երբեմն այդ ելույթները ՀՀԿ-ի դեմ են ավելի շատ դառնում, քան թե իշխանությունների»,- ասաց նա: «Այդ նույն ելույթում կարելի էր, օրինակ, խոսել Արտաշես Թումանյանի մասին, որ ժամանակին եղել է նախագահ Քոչարյանի խորհրդականը, կամ պարոն Գուրգեն Արսենյանի, որ հիմա դեսպան է, իսկ ժամանակին կոալիցիայի անդամ էր՝ պարոն Քոչարյանի իշխանության: Էլ չեմ ասում, որ իրենց խմբակցությունով մի պատգամավոր է եկել խորհրդարան, որ Փաշինյանից ավելի Փաշինյան է, ես միշտ փորձում եմ Գեղամ Նազարյանին իրեն արժանի ձեւով չպատասխանել, բայց երբ իր մասին չեն խոսում ու խոսում են ինչ-որ անհասկանալի բաների մասին, իմ համար անհասկանալի է: Դե էլ չեմ ասում, որ համայնքապետեր կան, որ ժամանակին ներկայանում էին որպես ընդդիմադիր, բայց հիմա լավ էլ հաշտ են ամեն ինչի հետ»,- ասաց նա՝ թերեւս նկատի ունենալով «Հայաստան» դաշինքի մաս կազմող սյունյաց համայնքապետերին՝ Գորիսի եւ Քաջարանի, որոնք հիմա ընդունում են իշխանության ներկայացուցիչներին եւ ՔՊ-ի հետ պրոբլեմ չունեն: «Այնպես որ, այո, կարելի է բացահայտումներ անել, բայց իմ ու քո անելով չխոսել, էլի, որովհետեւ ստացվում է՝ նման ելույթների նպատակը ՀՀԿ-ին կսմթելն է, քան թե իշխանության այս կամ այն թերությունների մասին խոսելը: ՀՀԿ-ում մարդիկ են, որ, 2018 թվականից սկսած, ոչ քրգործերից են վախեցել, ոչ ատելության քարոզից, շարունակել են, շարունակում են ու կշարունակեն մինչեւ հաղթական ավարտ: Սեփական աչքի գերանը չտեսնելով՝ ուրիշի աչքի չոփից խոսել չի կարելի»,- ասաց Հայկ Մամիջանյանը:

- Փոխարենը եկեղեցին կտուժի:

- Դրա փոխարեն կտուժենք բոլորս՝ որպես պետություն, որպես ազգ, որպես հասարակություն եւ որպես եկեղեցի: Հակասահմանադրական ճանապարհով բարեփոխում չեն անում: Հետո՝ դու ո՞վ ես, որ բարեփոխում ես անում: Դու՝ ինքդ քեզ բարեփոխիր, պատասխան տուր այն բոլոր ապօրինությունների համար, որ արել ես: Ուղղակի մենք կանգնած ենք դիկտատուրայի, ավտոկրատիայի առաջ, եւ որեւիցե ձեւով, ովքեր որ կոչված են այս իրավական քաոսը կարգավորելու, իրենց պարտականությունները չեն կատարում՝ Սահմանադրությամբ իրենց տրված ե՛ւ որպես լիազորություն, ե՛ւ որպես պարտականություն: Մենք՝ որպես հոգեւորականություն, ես՝ անձամբ ինքս, ե՛ւ որպես հավաքականություն, ե՛ւ որպես հոգեւոր դասի ներկայացուցիչ, Հայաստանում ապրում եմ այնպիսի զգացողությամբ, որ մեր պետությունը, մեր սիրելի պետությունն այլեւս իրավական պետություն չէ: Ես պաշտպանված չեմ ոչնչով: Իհարկե, ես պաշտպանություն չեմ ուզում, հոգեւորական եմ, բայց գոնե թող բարձրագոռգոռ չարտահայտվեն իշխանության որոշ ներկայացուցիչներ, որ մենք ապրում ենք ժողովրդավարության, իրավական պետության պայմաններում, եւ երբեմն նաեւ մեզնից իբրեւ ժողովրդավարությունը պաշտպանում են: Այս երկրում ամենաուժեղ պաշտպանված հատվածը 2018 թվականից հետո փողոցում շներն են. դա կոչվում է ցինիկ ժողովրդավարություն: Եթե գիտեն, թե «ցինիկ»-ն ինչ է նշանակում ու որտեղից է գալիս, կհասկանան:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԵԿԵՂԵՑԻՆ Է ՔԱՆԴՈՒՄ, ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՆՔՆ ԻՐԵՆ

Հայ առաքելական եկեղեցու եւ բարձրաստիճան հոգեւորականների դեմ իշխանության վերջին օրերի տեռորը թվում էր, թե պետք է սթափեցներ Մորփեոսի գիրկն անցած ընդդիմությանը, որ քայլեր ձեռնարկեին, փորձեին կանխել իշխանության եկեղեցաքանդ գործողությունները, սակայն ընդդիմությունը չնայած ակտիվացել է, բայց միայն ներընդդիմադիր պայքարի հարցում: Իմպիչմենտի թեմայով երկար ամիսներ տեւած գզվռտոցից հետո կարծես հրադադար հաստատվեց, եւ Սերժ Սարգսյանի ու Ռոբերտ Քոչարյանի թիմերը հանդարտվեցին: Մեզ էլ թվաց, թե իշխանությանը հեռացնելու հրամայականի շուրջ նրանք կոնսենսուսի են եկել: Սակայն նախօրեին այդ հրադադարը խախտեց Քոչարյանի թիմակից, «Հայաստան» դաշինքի պատգամավոր Աննա Գրիգորյանը, որը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թեկնածությունը քննարկելու ժամանակ իր ելույթում խոսեց կոռուպցիայի մասին: Իսկ ի պատասխան Ռուբեն Ռուբինյանի հերթական հիշեցմանը, թե նա դավաճանել է նախկին թիմակիցներին եւ արտագաղթել Քոչարյանի ցուցակ, Աննա Գրիգորյանը որոշեց, որ ոչ այնքան պետք է ՔՊ-ականներին իրենց տեղը ցույց տա, որքան՝ քննադատի ՀՀԿ-ականներին: Նա դիմեց ՔՊ շարքերն անցած նախկին ՀՀԿ-ական Շիրակ Թորոսյանին, թե ինչպես եք ամեն անգամ լսում Ռուբինյանի նմանատիպ ելույթները, երբ դուք եւ մյուս նախկին ՀՀԿ-ականներդ եք իրականում դավաճանել եւ ընդդիմությունից իշխանական թիմ անցել:

«Կամ՝ էն մյուս օլիգարխը՝ ՀՀԿ-ական, իրա տղան հիմա ձեր մարզպետը չի՞, 2021 թվականին էդ մարդը «Պատիվ ունեմ»-ի շտաբի պետն ա եղել»,- ասաց Աննա Գրիգորյանը՝ նկատի ունենալով «Ջերմուկ գրուպի» սեփականատեր Աշոտ Արսենյանին եւ նրա որդուն՝ Վայոց Ձորի մարզպետին: Բայց սրանով էլ ընդդիմադիր պատգամավորուհին չհանգստացավ, ՔՊ-ականներին հորդորեց. «Գնացեք գյուղերը, պտտվեք, ինչքան ՀՀԿ-ական տասովշչիկ կա, բոլորը ձեր համար են աշխատում, կարող ա՞ էդպես չի, իհարկե, էդպես ա»:

Հիշեց նաեւ ֆեյք ՀՀԿ-ական Գեւորգ Պապոյանին, որը հիմա ՔՊ-ի փոխնախագահն է: Աննա Գրիգորյանի այս ելույթը, մեր տեղեկություններով, ՀՀԿ-ում, մեղմ ասած, դուր չեկավ: Ելույթից հետո «հայաստանցիները» փորձել են գործընկեր խմբակցության պատգամավորներին պարզաբանումներ տալ, թե միտումնավոր չէր ՀՀԿ-ի թեման արծարծվել, ուղղակի Աննային հունից հանել են, նա էլ չի կարողացել տիրապետել ու չափը գուցե անցել է: Սակայն երեկվա զարգացումները ցույց տվեցին, որ արդարացումները հիմնավոր չեն համարվել, եւ սկսվել է միջթիմային նոր հրաձգություն: Երեկ խորհրդարանում ճեպազրույցների ժամանակ **Հայկ Մամիջանյանը** ոչ թե շրջանցեց այդ մասին իրեն ուղղված հարցը, այլ հավուր պատշաճի «աբառոտկա ֆռռաց»: «Եթե խոսել, պետք է խոսել ամբողջական, որովհետեւ երբեմն այդ ելույթները ՀՀԿ-ի դեմ են ավելի շատ դառնում, քան թե իշխանությունների»,- ասաց նա: «Այդ նույն ելույթում կարելի էր, օրինակ, խոսել Արտաշես Թումանյանի մասին, որ ժամանակին եղել է նախագահ Քոչարյանի խորհրդականը, կամ պարոն Գուրգեն Արսենյանի, որ հիմա դեսպան է, իսկ ժամանակին կոալիցիայի անդամ էր՝ պարոն Քոչարյանի իշխանության: Էլ չեմ ասում, որ իրենց խմբակցությունով մի պատգամավոր է եկել խորհրդարան, որ Փաշինյանից ավելի Փաշինյան է, ես միշտ փորձում եմ Գեղամ Նազարյանին իրեն արժանի ձեւով չպատասխանել, բայց երբ իր մասին չեն խոսում ու խոսում են ինչ-որ անհասկանալի բաների մասին, իմ համար անհասկանալի է: Դե էլ չեմ ասում, որ համայնքապետեր կան, որ ժամանակին ներկայանում էին որպես ընդդիմադիր, բայց հիմա լավ էլ հաշտ են ամեն ինչի հետ»,- ասաց նա՝ թերեւս նկատի ունենալով «Հայաստան» դաշինքի մաս կազմող սյունյաց համայնքապետերին՝ Գորիսի եւ Քաջարանի, որոնք հիմա ընդունում են իշխանության ներկայացուցիչներին եւ ՔՊ-ի հետ պրոբլեմ չունեն: «Այնպես որ, այո, կարելի է բացահայտումներ անել, բայց իմ ու քո անելով չխոսել, էլի, որովհետեւ ստացվում է՝ նման ելույթների նպատակը ՀՀԿ-ին կսմթելն է, քան թե իշխանության այս կամ այն թերությունների մասին խոսելը: ՀՀԿ-ում մարդիկ են, որ, 2018 թվականից սկսած, ոչ քրգործերից են վախեցել, ոչ ատելության քարոզից, շարունակել են, շարունակում են ու կշարունակեն մինչեւ հաղթական ավարտ: Սեփական աչքի գերանը չտեսնելով՝ ուրիշի աչքի չոփից խոսել չի կարելի»,- ասաց Հայկ Մամիջանյանը:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ 6 ԱՄԻՍ Է՝ ՏՆՕՐԵՆ ՉՈՒՆԻ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ Է ՎԱՐՈՒՄ

Նոյեմբերի վերջին հինգշաբթի օրը, որը սովորաբար համընկնում է Գովաբանության տոնի հետ, «Հայաստան» համահայկական հիմնադրամն ավանդաբար անցկացնում էր իր տարեկան հեռուստամարաթոնը: Նախկինում այս միջոցառումն անցկացվում էր ուղիղ եթերում, որը հեռարձակում էին գրեթե բոլոր հեռուստաընկերությունները, եւ այն տեւում էր 24 ժամ: Թելեթոնը լայնորեն լուսաբանվում էր, նախապես անոնսավորվում, այնպես որ՝ հնարավոր չէր չհետեւել դրան: Մեծ թվով մարդիկ էին մասնակցում այդ

եթերին, նախապես տեսանյութեր էին նկարահանվում, հայտնի մարդիկ էին խոսում, եւ դա դառնում էր համահայկական ուշագրավ իրադարձություն:

Այս անգամ Հանրայինի եթերում հիմնադրամի հեռուստամարաթոնն անցավ գրեթե աննկատ, տեւեց 6 ժամ, եթերն ուղիղ չէր, այլ՝ «մոնտաժված»: Մամուլն էլ այն չլուսաբանեց: Դրան հետաքրքրությամբ հետեւել են թերեւս միայն «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախկին աշխատակիցները, որոնք արձանագրում են՝ ոչ մի թիվ, գումար, նվիրաբերությունների չափ եթերում չհնչեց: «Չեն ուզում թիվը հայտարարել, որովհետեւ փող չեն կարողանում հավաքել: Որոշել են ներկայացնել, որ կլոր տարին դրամահավաք են անելու: Դեկտեմբերին, հավանաբար, մի փոքր հաշվետվություն կտան, թե մարաթոնին ինչքան է հավաքվել»,- ասում է նրանցից մեկը:

Տպավորություն է, որ «Հայաստան» համահայկականն ամբողջությամբ փոխել է իր էությունն ու բնույթը: Ինչպես ասաց նախկին աշխատակիցներից մեկը՝ ««համահայկական» բառն արդեն չի աշխատում, փորձում են սրա-նրա միջոցով մանր-մունր ծրագրեր անել: Ամեն տեղ ավերակ է հիմա»: Նա եւ մեր մյուս զրուցակիցները չցանկացան հրապարակավ քննադատել հիմնադրամը՝ ասելով, որ մարդիկ էլի ինչ հնարավոր է, անում են, ինչը հեշտ չէ համահայկական այս անվստահության պայմաններում: Ռուսաստանի հայությունը, որ նախկինում ամենաակտիվ համայնքն էր, այսօր ոչ մի դրամ չի տալիս: Երկրների գրասենյակներն իրենց առանձին ծրագրերն են անում: Բայց համեմատություններ կատարելով նախկին ու ներկայիս ծրագրերի միջեւ, մեր զրուցակիցներն օգնեցին հասկանալ, թե ինչու է համայն հայությանն ընդհանուր մեծ նպատակների շուրջ միավորող այս կառույցն այսօր դարձել մի շարքային կառավարական ֆոնդ, ինչպես, ասենք, «Իմ քայլը» կամ «Սիթի օֆ սմայլը»:

Դա փաստում է նաեւ հիմնադրամը: Օրերս հաղորդեցին, որ մեկնարկել է ինչ-որ դրամահավաք-արշավ՝ Սյունիքի մարզի Սպանդարյանի ջրանցքի վերակառուցման համար: Նույն հաղորդագրության մեջ կարդում ենք. «Ավանդական հեռուստամարաթոնի ձեւաչափին փոխարինել է հանրային, մշակութային գործիչների մասնակցությամբ հայրենիքի մասին մտորումների ու զրույցների շարք: Իսկ դրանց ընթացքում ցուցադրվել է մոտիվացիոն երեք տեսաֆիլմ-ուղերձ, որոնք արտահայտում են հիմնադրամի նոր տեսլականը՝ որպես հայերի միավորման եւ հայրենիքի հավերժության ուղերձ՝նկարահանված Սյունիքում եւ Սպանդարյան ջրանցքի ու ջրամբարի ավազանում»:

Այսպիսով, հիմնադրամի ղեկավարությունն ավանդական հեռուստամարաթոնը որոշել է փոխարինել բարեգործների հետ զրույցների շարքով՝ սյուժեներով, որոնք պատրաստելու է Հանրային հեռուստատեսությունը: Համայն հայությանն ապավինելու փոխարեն, այսօր հիմնադրամը փորձում է ներդրողներ գտնել՝ ուղիղ աղբյուրներ, որոնք ուղղակի փող կտան նոր ծրագրերի համար: Հաղորդվում է, որ նոյեմբերի 24-25-ին կազմակերպել են հաշվետու հանդիպում-քննարկում բանկային համակարգի եւ ՀՀ խոշոր ձեռնարկատիրությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա են եղել ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը, Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը, որը, ի դեպ, հոգաբարձուների թվում է:

Պետք է նկատել, որ «Հայաստան» համահայկականը սովորական կառավարական ֆոնդի վերածելն ակնհայտ ու բնականոն գործընթաց էր: Այն, որ նախկին պերճանքից ոչինչ չի մնացել, համոզվում ենք՝ ծանոթանալով հիմնադրամի պաշտոնական կայքէջին: Այն այնքան հին է, որ «Մեր մասին» բաժնում մինչ օրս Արցախի դրոշն է ծածանվում: Հոգաբարձուների խորհրդի կազմում էլ կարդում ենք Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանի, ԱՀ պետնախարար Գուրգեն Ներսիսյանի անունները: Ի դեպ, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն եւ Նիկոլ Փաշինյանը նույնպես հոգաբարձուների խորհրդի անդամներ են, թեեւ վարչապետի վերջին տարվա ելույթներից ոչ մեկում «Հայաստան» համահայկական հիմնադրամը չի նշվել:

Հիմնադրամի կայքում տեղադրված վերջին հաշվետվությունը վերաբերում է 2024 թվականին, որի ընդհանուր բյուջեն կազմել է մոտ 5 մլն դոլար: Ծրագրերը փոքր են ու հատվածային: Արցախցիների համար 14 տուն կառուցվել է Լեռնագոգ համայնքում, 6 տուն՝ Ներքին Խնձորեսկում, Լճափ գյուղում բուժամբուլատորիա են կառուցել, Նոյեմբերյանում վերակառուցվել է Ն. Նասիբյանի անվան բժշկական կենտրոնի ինֆեկցիոն մասնաշենքը, Սեւանում երաժշտական դպրոց է կառուցվել, Գյումրիում են շենք կառուցել: Կան նաեւ ծրագրեր, որոնք ընթացքում են՝ ավարտված չեն: Դրանց չենք անդրադառնում, քանի որ թվարկվածից էլ պարզ է, որ նախկին հիմնադրամից, որը ճանապարհներ, մագիստրալներ, ջրագծեր, ոռոգման համակարգեր, հարյուրավոր դպրոցներ ու հիվանդանոցներ էր կառուցում, ամբողջական գյուղեր վերականգնում, ոչինչ չի մնացել: Վերջին մեծ ծրագիրը, որն իրականացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով, Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցումն էր: Այն բացվեց 2017 թվականի սեպտեմբերի 1-ին՝ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի, Արցախի նախագահ Բակո Սահակյանի ներկայությամբ, եւ հիմնադրամի ամենախոշոր ծրագրերից էր՝ 17 մլրդ ընդհանուր արժողությամբ, իսկ գումարները հանգանակվել էին 2013 եւ 2014 թվականների հեռուստամարաթոնների ընթացքում: Միշտ լինում էր մի մեծ ծրագիր եւ կողքից 20, 30, 40 այլ ծրագրեր՝ դպրոցաշինություն, գյուղապետարանների, ոռոգման ցանցերի կառուցում: Հիմա մեծ ծրագրեր չկան, կան փոքրեր: Հիմնադրամն անգամ տնօրեն չունի՝ Հայկակ Արշամյանը նշանակվեց Հունգարիայում ՀՀ դեսպան: Այսօր հիմնադրամը ղեկավարում է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Զարուհի Ազնաուրյանը: Բայց լուրեր կան, որ շուտով տնօրեն կունենան: Խոսակցություններ են պտտվում, որ այդ պաշտոնին նշանակվելու է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի օգնական Արամայիս Ավետիսյանը:

Հայկական սփյուռքի առավել բարվոք վիճակում գտնվող հատվածը՝ ԱՄՆ հայ համայնքը, որը նախկինում ահռելի գումարներ էր փոխանցում հիմնադրամին, այսօր այլեւս չի կարողանում փող հավաքել, քանի որ պատերազմական 2020 թվականից հետո ամբողջությամբ կորել է վստահությունը «Հայաստան» համահայկականի նկատմամբ: Բյուջե մուտքագրված 100 մլն դոլարի համար, որը հիմնադրամի հաշվից փոխանցվել էր ՀՀ կառավարությանը, սփյուռքը ՀՀ իշխանություններին չի ներել: 44 օրում հիմնադրամի միայն ԱՄՆ կառույցը հավաքել էր մոտ 150 մլն դոլար: Այդ գումարից մոտ 70 միլիոնը փոխանցել է Հայաստան, 80 մլն դոլարը մնացել է: Հիմնադրամի նախկին աշխատողները պատմում են, որ այդ 80 մլն-ն ԱՄՆ մարմինը ներդրել է բաժնետոմսերի մեջ: «Դա օրենքով արգելված չէ, եւ ամեն տարի այդ գումարից գոյացած տոկոսով, որը տարեկան 3-5 մլն դոլար է, ամերիկյան գրասենյակը դրա մի մասով հոգում է իրենց այնտեղի գրասենյակի ծախսերը, մյուս մասն ուղարկում է Հայաստան»,- պատմում է հիմնադրամի նախկին աշխատակիցներից մեկը:

Հիմնադրամի Ֆրանսիայի մասնաճյուղը եւս պասիվ է: Այս տարի ֆոնեթոնին 1,5 մլն եվրո է հավաքվել: Հնարավոր է, որ սրան գումարվեն կտակները: Վերջին մի քանի տարում Ֆրանսիայի հիմնադրամը կարողացել է մեծ թիվ ցույց տալ, բայց՝ կտակների հաշվին: Անցյալ տարի կտակների հաշվին 2-3 մլն էր ստացել հիմնադրամը: «Մարդիկ, ենթադրենք, 10 տարի առաջ իրենց ունեցվածքը կտակել են հիմնադրամին, հիմա մահանում են, ու այդ գումարները մուտք են արվում հիմնադրամ»,- բացատրեցին մեզ: Կարելի է ասել, որ 2020 թվականից հետո հիմնադրամի գումարները շեշտակիորեն կրճատվել են: Եթե նախկինում ամեն տարի 30-40 մեծահարուստ ահռելի գումարներ էր հանգանակում, ոմանք՝ անգամ 1 միլիոն դոլար, որ Արցախում ծրագրեր իրականացվեն, Հայաստանում ճանապարհներ կառուցվեն, ապա այսօր 100 հազար դոլար եւ բարձր նվիրատվություններ անողներն ընդամենը 2-3 հոգի են: Միայն Մոսկվայի «ճաշին» 20-30 հոգի էր մասնակցում, որոնք մեկ մլն դոլարից ավելի էին տալիս հիմնադրամին: Բայց այդ մարդիկ այլեւս Հայաստանի իշխանությանը չեն վստահում: Հիշենք, որ մինչեւ «թավշա հեղափոխությունը» «Հայաստան» համահայկական հիմնադրամը 9, 10, 16 մլն դոլար էր հավաքում, մի անգամ էլ Սամվել Կարապետյանի միջոցների հաշվին մոտ 25 մլն դոլար հավաքվեց: Կարապետյանը նաեւ իր միջոցներից 30 մլն դոլար հատկացրեց Ստեփանակերտի հիվանդանոցի կառուցմանը:

2018 թվականին Կարապետյանը հիմնադրամին նվիրաբերել էր 2.8 մլն դոլար, այսինքն՝ 2024 թվականին հիմնադրամի ծրագրերի վրա ծախսած գումարների կեսից ավելին: Սրանք փաստեր են, որոնք այսօր մոռացության են տրվել: Փորձեցինք լսել «Հայաստան» համահայկական հիմնադրամում երկար տարիներ աշխատած Տիգրան Պասկեւիչյանի մեկնաբանությունը, թե ինչու է կորել հիմնադրամի նախկին փայլը: «Այս պահին հիմնադրամն իր ծրագրերով ամենակարեւոր խնդիրը չէ: Երկրում ակնհայտորեն դրվում են բռնապետության հիմքերը, դրա մասին է պետք մտածել: Ազատություն քաղբանտարկյալներին»,- ասաց նա:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԲՐԻՖԻՆԳ

ԻՆՉ ԱՍԱՑ ՓԱՇԻՆՅԱՆԸ

Արցախյան բանակցությունների բոլոր ժամանակների փաստաթղթերի հրապարակման կապակցությամբ Փաշինյանն Ազգային ժողովում մի շարք լուրջ ու վտանգավոր ինքնախոստովանություններ արեց: Ճիշտ է, նա ամեն ինչում, այդ թվում եւ Արցախի խնդրի չկարգավորման մեջ մեղադրեց ու մեղադրեց նախկիններին, խոսեց ու խոսեց իր անմեղությունից, օգտագործեց ու օգտագործեց խրթին, ընդհուպ անհասկանալի ձեւակերպումներ, բայց չկարողացավ ասել մի շատ պարզ բան՝ ի վերջո, ինքն ի՞նչ է պատասխանել ՄԽ համանախագահների 2019թ. առաջարկներին, որոնք առանձնապես ոչնչով տարբեր չեն եղել նախորդած շրջանի առաջարկներից: Փաշինյանից ես ընդամենն այդ հարցի պատասխանն էի ակնկալում, այն էլ չստացա: Բայց որ ճիշտն ասեմ, շատ էլ վշտացած չեմ դրա համար: Փոխարենը Փաշինյանը ինքնախոստովանությունների այնպիսի շքերթ կազմակերպեց ԱԺ ամբիոնից, որ նույնիսկ ոզնուն պարզ դարձավ, թե ով է հրահրել 44-օրյա պատերազմը, ով է մեղավոր մեր սարսափելի կորուստների համար, ով է «ոչնչացրել» Արցախի Հանրապետությունը, ով է հայաթափել մեր հինավուրց հայրենիքի Արցախ աշխարհը, ում խելացի քաղաքականության շնորհիվ են Հայաստանի Հանրապետության որոշ տարածքներ օկուպացվել Ադրբեջանի կողմից, ովքեր են եղել նրա «գործընկերները» 2019-ին, 2020-ին եւ հաջորդած մյուս տարիներին՝ մինչ օրս: Այս հարցերի պատասխանը մեկն է՝ Իլհամ Ալիեւի եւ Ռեջեբ Էրդողանի տանիքի տակ պատսպարվող Փաշինյանը: Նա, ինչպես ինքն է սիրում ասել, «գրեթե ամբողջությամբ եւ համակողմանիորեն» խոստովանեց դա:

Արցախյան խնդրի հետ կապված Փաշինյանի լոլոներն ինձ վաղուց չեն հետաքրքրում: Դրանք այնքան իրարամերժ ու հակասական են, որ բառերով նկարագրելն ուղղակի անհնար է: Բացեք համացանցը, մտեք Ֆեյսբուք... Փաշինյանի մասնակցությամբ լիքը տեսանյութեր կան՝ ասածս հիմնավորող: Ուստի դրա վրա հիմա ժամանակ չեմ վատնի: Եկեք կենտրոնանանք Փաշինյանի վերջին ինքնախոստովանական ցուցմունքների վրա, որոնք նա այլեւս չի կարող հերքել, որովհետեւ ո՛չ ժամանակ ունի դրա համար, ո՛չ էլ փաստարկներ:

Եվ, ուրեմն, ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում Արցախի հարցի կարգավորման բոլոր փաստաթղթերով (փաթեթային, թե փուլային) կարմիր թելի պես անցնում են Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման սկզբունքները: Չի եղել գեթ մեկ դեպք, որ ՄԽ համանախագահող երկրների ղեկավարները հայտարարեն, որ Արցախն Ադրբեջանի մաս է, եւ կամ՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պահպանմամբ խախտվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: ՄԽ հայտարարություններում ու փաստաթղթերում (ներառյալ 2019թ. հունիսի առաջարկները) դուք որեւէ նման կետ չեք գտնի: Հետեւաբար, Նիկոլ Փաշինյանը ստում է, ասելով, որ բանակցային ողջ գործընթացն այն մասին է, թե ինչպես Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում: Ի դեպ, Փաշինյանի այս անհիմն հայտարարությանը երեկ չէ, առաջին օրը անդրադարձել էին նաեւ ՌԴ ԱԳՆ-ից եւ հերքել այդ ցնդաբանությունը: Չախարովան մեղադրել էր ՀՀ կառավարությանը՝ առանց համանախագահների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) հետ համաձայնեցնելու բանակցային փաստաթղթերի հրապարակման համար եւ ապա ընդգծել, որ առնվազն Ռուսաստանը երբեք չի տարանջատել վերոնշյալ սկզբունքները:

Նիկոլի կառավարության դիվանագիտական անգրագիտությունն էլ եթե մի կողմ թողնենք, միեւնույն է, Փաշինյանին չհաջողվեց փաստաթղթերը հրապարակել այնպես, որ դա դիտվի որպես թափանցիկ քաղաքականության դրսեւորում: Դրանք հրապարակեց խիստ տենդենցիոզ ձեւով, ինչից ակնհայտ դարձավ, որ նպատակը ոչ թե փաստաթղթերի ներկայացումն է, այլ իր ընտրազանգվածին հիմարացնելն ու Արցախն Ադրբեջանին հանձնելը (չասենք՝ ինչ գնով) արդարացնելը: Փաշինյանի բերած բոլոր «փաստարկներն» ու հախուռն «նետարձակումներն» այնքան ողբալի էին, այնքան պարզունակ, որ թվում էր՝ ԱԺ ամբիոնին է մոտեցել «մահվան» դատապարտված հանցագործը, որին վերջին խոսքի իրավունք են տրամադրել, ու նա այդ պահին ամեն ինչ անում է՝ արդարացվելու համար: Իսկ հրաշք տեղի չունեցավ: Նա իր հայտարարություններով ավելի փչացրեց գործը, ասելով՝ լավ եմ արել, որ Արցախը տվել եմ:

Մարդը, «հանրային գնդակահարությունից» հինգ պակաս, ասացեք, խնդրեմ, հռետորական հարց է հնչեցնում նախկին բանակցողներին՝ բա որ այդքան լավն ու հայամետ էին ձեր բանակցությունները, ինչո՞ւ չլուծվեց Ղարաբաղի հարցը: Չեմ կարծում, թե մեծ քաղտեսաբան պետք է լինել՝ Փաշինյանի այս հարցին պատասխանելու համար: Բոլորս էլ գիտենք, որ արցախյան բանակցային գործընթացի ողջ երկայնքով Արցախը եղել է հայկական, Արցախ ենք գնացել-եկել, ինչպես մեր տուն, նույն եկեղեցում էինք աղոթում, նույն բանակում ծառայում, նույն դրամական միավորն ունեինք, նույն փոստը, նույն բանկերը, նույն դպրոցը, նույն համալսարանները... Չմոռանանք նաեւ, որ Արցախում ու Հայաստանում առնվազն երկու սերունդ էր ծնվել ու մեծացել, որ չգիտեր՝ ինչ է Ադրբեջանի իշխանությունը: Ինչո՞վ մերը չէր Արցախը, ինչո՞վ մենք Հայաստան-Արցախ չէինք: Ու քանի անգամ են այդ իրողություններն իրենց Արցախ կատարած այցերով ու Արցախի Հանրապետության ղեկավարների հետ իրենց հանդիպումներով հաստատել ԵԱՀԿ ՄԽ համանախագահների ներկայացուցիչները, եվրոպական կառույցների պաշտոնյաները, Եվրախորհրդարանից եւ աշխարհի այլ երկրների խորհրդարաններից հյուրընկալված պատգամավորները: Հիմա դու, Նիկոլ, եկել, ինձ ասում ես՝ բանակցում էին Ղարաբաղը (լեզուդ չի էլ պտտվում Արցախ ասել) Ադրբեջանի կազմում թողնելու համար: Մինչդեռ իրականում ամեն ինչ անում ես, որ արդարանաս, որ մոռացվեն Արցախի եւ Շուշիի մասին քո խայտառակ հայտարարությունները... Ամեն ինչ այսպես էլ լինելու էր, միայն թե՝ առանց զոհերի, բա մեզ պե՞տք էր Շուշիի նման դժգույն ու դժբախտ քաղաքը... Եվ ինչո՞ւ միայն Արցախի եւ Շուշիի մասին հայտարարությունները, իսկ Հայաստանի ձյունապատ լեռնո՞ւրը, Սեւ լի՞ճը, Գորիս-Կապան ճանապա՞մրհը, Կիրա՞նցը, «Զանգեզուրի մի՞ջանցքը», «անկլավնե՞րը»... Ասել է, չէ՞, որ մի քանի հարյուր քառակուսի կիլոմետրի համար չի փչացնելու հարաբերություններն Ալիեւի հետ: Եվ սա, այո, շատ բնական է, երբ երկրի ղեկավարն իր հայրենիքին վերաբերվում է որպես սովորական տարածքի, խոտհարքի, արոտավայրի:

Ասելու ոչինչ չունեմ «գնդակահարության պատի տակ կանգնածին»: Ո՛չ հիսուսն եմ, որ թողություն տամ մեղքերին, ո՛չ էլ դահիճ, որ մի հարվածով վերջ տամ արդեն 8 տարի ձգվող այս խեղկատակությանը: Էլ բան չի մնացել անելու՝ Եկեղեցուց ու հոգեւոր դասից է կառչել՝ իբր ինքն այնքան մաքուր է... Ի՞նչ են այս պիղծ պատարագները, ի՞նչ են սրբազան հայրերի դեմ սկսված այս անհիմն հալածանքներն ու ծիծաղելի ոտնձգությունները: Դու ո՞վ ես, որ ասում ես՝ կաթողիկոսը պետք է հեռանա: Կաթողիկոսը քո աշխատողը չէ, ո՛վ մոլորյալ որդյակ: Գոնե վերջին շնչում խելքիդ տիրություն արա, որ քեզ չլքի հավերժի ճամփան բռնելուց առաջ:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՈՉ ԱԴԵԿՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՉՈՒՆԻ

Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանին կալանավորելու համար մոգոնված պատմությունը վկայում է, որ «քեռակնոջը դոմփելու» մեղադրանքով նրան չկարողացան վարկաբեկել ու խեղճացնել, եւ դա ամբողջությամբ հիմնված էր կեղծիքի վրա: Ու քանի որ չի գտնվել խելքը գլխին տարբերակ, օգտագործվեց տխմարագույնը՝ «ուրիշի ջեբը պլան գցելու» պատմությունը: Սկզբում հայտարարվեց, որ ինքն է ինչ-որ մեկի գրպանը պլան գցել: Հետո երեւի գցել-բռնել են, որ հոգեւոր մարդը դժվար թե իր մոտ պլան պահի ու հետն էլ գցի ուրիշի գրպանը, կանգ են առել իբրեւ թե ավելի ճշմարտանման տարբերակի վրա՝ դա հրահանգել է ուրիշին: Բայց դա նշանակում է, որ պետք է գտնեն մեկին, որն իր վրա կվերցնի այդ հանցանքը: Ու այդ անձն էլ պետք է շփված լինի հոգեւորականի հետ, ինքնախոստովանական ցուցմունք տա ու դատվի, որովհետեւ բուն հանցանքը կատարողն ինքն է, ոչ թե Արշակ սրբազանը: Բայց դա այնքան էլ կարեւոր չէ, որովհետեւ եթե չգտնվի էլ, Սրբազանին բանտում կպահեն մինչեւ 2026-ի ընտրությունները: Իսկ դրանից հետո, ինչպես մեր ժողովուրդն է ասում՝ «յա՛ էշը, յա՛ իշատերը»:

Ի դեպ, իշխանափոխությունից հետո շատ հեշտ կարելի է բացահայտել «պլան գցելու» դրվագը մոգոնած անձին: Նա կլինի այն իրավապահների շրջանից, ովքեր հենց նման գործերով են զբաղված: Իսկ նա, ով ծանոթ է գեբելսյան մանիպուլյացիոն մեթոդներին, վերադասի մոտ հիմնավորել է այդ մեղադրանքի «աշխատող» լինելը: Գեբելսյան մեթոդներից մեկն ասում է՝ ինչքան անհավանական է մեղադրանքը, այնքան այն ընդունելի կլինի զանգվածների համար, որովհետեւ ով ասես կարող է մոգոնել «ստից» կեղծիք՝ նույնիսկ կիսագրագետ մեկը: Իսկ տրամաբանությունից դուրս կեղծիքը մարդկանց կստիպի մտածել, որ նման բան անհնար է: Բայց եթե ասում են, ուրեմն մեջը ճշմարտություն կա: Ու հենց այդ պատճառով էլ ընտրվել է թմրանյութի պատմությունը: Իմ կարծիքով, որպես այդպիսի աննորմալ կեղծիք, սկզբում մոգոնվել է «քեռակնոջ» պատմությունը, բայց քանի որ այն սպասված ազդեցությունը չունեցավ, իշխանությունն անցավ պլան Բ-ին: Իշխանություն ասելով միշտ պետք է հասկանալ վարչապետի աթոռից իր ողջ էությամբ կառչած Նիկոլին:

Ի՞նչ կարող ենք եզրակացնել այս պատմությունից: Նախ՝ այն, որ հանուն իշխանության պահպանման, վարչապետի աթոռից կառչած անձը պատրաստ է ամեն ինչի, այսինքն՝ բարոյական բոլոր սահմաններն անցնելուն, բոլոր օրենքները խախտելու, իսկ իրավապահներին դարձրել է կամակատարներ: Դա, բնականաբար, աննորմալ իրավիճակ է Արեւմուտքի կողմից աջակցություն վայելող «ժողովրդավարության» պարագայում: Մեր երկրում, փաստորեն, ոչ ադեկվատությունը սահմաններ չունի, եւ դա կարող ենք գնահատել որպես հայաստանյան «ժողովրդավարության» էություն: Ինչ վերաբերում է Եվրամիությանը եւ եվրոպական երկրներին, ապա դրանք թքած ունեն մեր երկրի ու մեր ժողովրդի վրա՝ մարդկանց «կերակրելով» վիզաների ազատականացման անիմաստ գաղափարով: Անիմաստ, քանի որ Նիկոլի «սիրելի» ժողովուրդը հիմնականում այն զանգվածն է, որը Եվրոպա չի մեկնում: Իսկ վարկային ու դրամաշնորհային միջոցների առնչությամբ էլ ասենք, որ դրանք հատկացվել ու շարունակում են հատկացվել հակահայաստանյան ինչ-ինչ նպատակների իրականացմանը, ինչը մենք զգում ենք մեր մաշկի վրա՝ 3 տասնամյակ ապրելով նրանց կողմից գեներացված միջավայրում:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՎԱՀԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱԶԳԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԸ ՀԱՅՏՆՎԵԼ Է ԱՅՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ, ՈՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԻՐԵՆ ՔԱՐԿՈԾՈՒՄ, ՎԱՐԿԱԲԵԿՈՒՄ ԷՐ

Վրաստանի հայազգի բժիշկ, հասարակական գործիչ **Գուրգեն Մխիթարյանը** մի քանի ամիս առաջ «Հրապարակի» հետ զրույցում պաշտպանում էր Վրաստանի թեմի նախկին առաջնորդ Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանին, երբ վերջինս Բալկաններում ջերմ ընդունելության էր արժանացրել Փաշինյանին, եւ դրա համար նրան քննադատում էին:

«Եթե ես ժամանակին պաշտպանել եմ Վազգեն Միրզախանյանին խուժան մասսայի վայրահաչոցներից՝ մեծամասնություն կոչվող թափթփուկների ստախոսություններից, բամբասանքներից, ես գտնում եմ, որ ճիշտ եմ արել, քանի որ այն, ինչի մեջ մեղադրում էին Վազգեն Միրզախանյանին, ես դրանց ականատեսը չեմ եղել եւ այդ փաստերին չեմ տիրապետել, իսկ բամբասանքներն ու ասեկոսեներն ինձ համար հիմք չեն, որպեսզի կարծիք կազմեմ: Վազգեն Միրզախանյանը՝ որպես թեմակալ եպիսկոպոս, ինձ մոտ թողել է շատ դրական տպավորություն, ինձ համար նա եղել է շատ դրական անձնավորություն՝ այստեղ՝ Թիֆլիսում աշխատած ժամանակ: Եվ ինչ իր հասցեին խոսել են, ինձ համար հիմք չի եղել: Բայց ինչ խոսել են եւ ովքեր խոսել են, այսօր Վազգեն Միրզախանյանն իր ելույթով ցույց տվեց, որ ինքը գտնվում է այդ նույն մարդկանց ճամբարում, ովքեր որ իրեն վարկաբեկում էին եւ ովքեր շարժվում էին եկեղեցու դեմ. դրանք այն մարդիկ էին, որ երբ հեղափոխությունից հետո «Նոր Հայաստան՝ նոր կաթողիկոս» շարժումը սկսվեց, հենց այդ մարդիկ էին իրեն վարկաբեկում եւ հենց այդ մարդիկ Թիֆլիսից գնացին՝ Հովհաննավանքի պատարագին մասնակցելու: Եվ Վազգեն Միրզախանյանը, կամա թե ակամա, այսօր գտնվում է այդ ճամբարում՝ իրենց հետ միասին»,- ասաց Մխիթարյանը:

Մեր զրուցակիցը շեշտում է, որ Թբիլիսիում կային հավատացյալ մարդիկ, որոնք շատ էին սիրում ու հարգում Միրզախանյանին, սակայն նրա՝ «աղանդավորների» ճամբարում հայտնվելուց հետո խոր ցավ եւ հիասթափություն են ապրում: Ինչ վերաբերում է հարցազրույցի ժամանակ Վազգեն արքեպիսկոպոսի արած ակնարկին, թե Վեհափառն օտար երկրների ազդեցության տակ է, ապա նա պետք է հիշի, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հավերժ չէ, ՔՊ-ն էլ մշտական չէ, մշտական են միայն հայոց պետականությունը, հայ ազգը:

«Եթե Վազգեն Միրզախանյանը մեղադրում է, ապա թող բարի լինի՝ փաստեր հրապարակի: Նախքան Վեհափառին մեղադրելը, Վեհափառին վիրավորում էին, վարկաբեկում էին, իր աշխարհական անունով էին դիմում, եւ եթե նրա սիրտը ցավում է, մտահոգված է եկեղեցու հեղինակությամբ, ապագայով, ապա ինչո՞ւ այն ժամանակ չէր ընդվզում այդ նույն քաղաքական իշխանությունների դեմ, այդ թափթփուկների դեմ, որոնք եւ Թիֆլիսում կան, եւ Հայաստանում կան, որոնք կաթողիկոսին աշխարհական անունով էին դիմում: Մի բան էլ կա. մեղանչական խոսքի նման բան կա, որ մեղանչելով փորձում է արդարացնել եկեղեցասիրություն եւ այլն, բայց ես արդեն չեմ հավատում: Ցավում եմ, շատ եմ ցավում, ինքը շատ խելացի մարդ լինելով, շատ գրագետ հոգեւորական, շատ լավ քարոզիչ եւ ինձ համար շատ մեծ հեղինակություն էր, երբ Վրաստանի թեմակալ եպիսկոպոսն էր, բայց այսօր, ազնիվ խոսք, կարծիքս փոխվեց արդեն, չգիտեմ ինչ ասել»,- ասաց Մխիթարյանը: Ստացվում է, որ նա գտնվում է նույն ճամբարում, որտեղ են եւ Վեհափառին աշխարհական անունով դիմողները, նրան վարկաբեկողները: Իսկ ինչ վերաբերում է հարցին, թե ով է արտաքին աշխարհից կառավարվում. արտաքին աշխարհից կառավարվում են այն հոգեւորականները, այն մարդիկ, որոնց հայտարարություններն ու գործողությունները համընկնում են հայ ազգի թշնամիների թույլ տված արտահայտություններին: Գուցե Միրզախանյանին խոստացել են, որ կլինի իշխանությունների սրտի կաթողիկոսը: Մխիթարյանն ասաց, որ կարեւոր մի հարց կա. եթե ներկայիս կաթողիկոսին ուզում են գահընկեց անել, ապա հարցեր են առաջանում:

«Գարեգին Երկրորդի գահակալության ընթացքում միլիոնուկեսից ավելի հայ նահատակներ՝ ցեղասպանության զոհեր, սրբադասվեցին, եթե Գարեգին կաթողիկոսի դեմ սրանք ինչ-որ հարցեր ունեն եւ ուզում են նրան գահընկեց անել, ապա նրանք, փաստորեն, առոչինչ են դարձնում միլիոնուկես զոհերի սրբադասումը: Դա՝ առաջինը: Երկրորդը. եթե երեք պատրիարքների օրհնությամբ գահակալած Գարեգին Երկրորդին ուզում են գահընկեց անել, կամ որ ինքը հրաժարական տա՝ հանգիստ, խաղաղ հեռանա, նրանք առոչինչ են համարում երեք հայ պատրիարքների օրհնությունը՝ Արամ Առաջինի, երջանկահիշատակ՝ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ սրբազանի եւ Պոլսի պատրիարք Մեսրոպ Վարդան Մութաֆյանների օրհնությունները: Եթե այս օրհնություններն առոչինչ համարվեն, ցեղասպանության զոհերի սրբադասումն առոչինչ համարվի, ի՞նչ եք կարծում՝ եկեղեցին կլինի՞, թե՞ չի լինի: Ինձ թվում է, եկեղեցին կդադարի գոյություն ունենալ: Շահարկելով կաթողիկոսի անձը, նրանք հետամուտ են մեկ նպատակի՝ պախարակել, խայտառակել Հայաստանյայց առաքելական եկեղեցին, առոչինչ դարձնել պատրիարքների օրհնությունը եւ ցեղասպանության զոհերի սրբադասումը: Գարեգին Երկրորդը եպիսկոպոս է ձեռնադրվել Վազգեն Առաջին վեհափառի ժամանակ, հարց է առաջանում. առոչի՞նչ են համարում Վազգեն Առաջինի կողմից ձեռնադրությունը՝ այս կաթողիկոսին որպես եպիսկոպոս»,- ասաց վրացահայ գործիչը:

«Ֆունդամենտալ, հիմնովին քանդվում է հայոց եկեղեցին, եւ այստեղ արդեն երկրորդ հարցն է ծագում. ո՞վ է ծառայում դրսի ուժերին՝ Գարեգին Երկրո՞րդը, թե՞ նրա դեմ դուրս եկած եպիսկոպոսները»,- հարց է տալիս Մխիթարյանը: «Ո՞ւմ է ձեռնտու հայոց եկեղեցու չլինելը: Եվ այդտեղ Վազգեն Միրզախանյանը հիշատակում է Հռոմի պապերին: Եթե մենք կաթոլիկ աշխարհից ենք օրինակներ բերում, եթե մեկ օրինակ ընդօրինակենք կաթոլիկ աշխարհից, ապա չի բացառվում, որ հետագայում կընդօրինակենք Փարիզում օլիմպիական խաղերի բացման ծեսը: Եթե մենք ընդօրինակում ենք Հռոմի կաթոլիկ եկեղեցու ինչ-որ ծեսեր, օրենքներ եւ ասում ենք՝ վաղը, մյուս օրը ոչ մի երաշխիք չկա, որ չեն հիշատակի Բորջիայի օրինակը, կասեն՝ Բորջիան էլ է այսպիսի բաներ արել՝ ինչո՞ւ եք զարմանում: Կործանվում է հայոց եկեղեցին, իսկ հայոց եկեղեցու հետ միասին կործանվում է հայոց ինքնությունը: Ես չէի ուզի, որ սփյուռքն անմասն մնար եւ չպաշտպաներ: Հարցը Գարեգին Երկրորդ կաթողիկոսը չէ, հարցը հենց կաթողիկոսի գահն է»,-շեշտեց Գուրգեն Մխիթարյանը:

«Եթե Վեհափառի ժամանակ սրբադասվել են միլիոնուկես նահատակներ, ապա կեցցե «դրսից կառավարվող» Գարեգին Երկրորդ կաթողիկոսը: Եթե Գարեգին Երկրորդը Սանկտ Պետերբուրգում կառուցել է հոգեւոր ճեմարան՝ իր ուսանողներով, ապա կեցցե «դրսից կառավարվող» Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Եթե 44-օրյա պատերազմի ժամանակ Մայր Աթոռը 500 հազար դոլար հատկացրեց բանակին, ապա կեցցե «դրսից կառավարվող» Գարեգին Երկրորդ կաթողիկոսը: Ամենայն հայոց կաթողիկոսը չլուծարեց Արցախի թեմը, ուրեմն կեցցե «դրսից կառավարվող» Գարեգին Երկրորդ կաթողիկոսը: Եթե Գարեգին Երկրորդ կաթողիկոսը Շվեյցարիայում գումարեց մեծ ժողով, որտեղ ելույթ ունեցավ որպես Արցախի պատմամշակութային ժառանգության պահանջատեր, ուրեմն կեցցե «դրսից կառավարվող» Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը»,- եզրափակեց Գուրգեն Մխիթարյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ՊԱՀԱՆՋՈՂՆԵՐԻՑ ՈՄԱՆՔ ԿԱՊՎԱԾ ԵՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՍԿԱՆԴԱԼՆԵՐԻ ՀԵՏ



Զվստրիայի կաթոլիկ եկեղեցու մամուլի օրգանը՝ kathpress.at կայքը, անդրադարձել է Հայաստանում եկեղեցու դեմ իրականացվող արշավին:

«Փաշինյանի կառավարության եւ Հայ առաքելական եկեղեցու միջեւ հակամարտությունը սրվում է. Գարեգին Բ կաթողիկոսը հրավիրել է արտակարգ խորհրդակցություն»,- գրում է պարբերականը:

«Կառավարության եւ Հայ առաքելական եկեղեցու միջեւ մայիսից շարունակվող լուրջ առճակատումը շարունակում է սրվել Հայաստանում: Կովկասյան այս երկրի իշխանությունները հինգշաբթի օրը ձերբակալել են եկեղեցու դիվանապետ, արքեպիսկոպոս Արշակ Խաչատրյանին: Տեղական լրատվամիջոցների հաղորդագրությունների համաձայն, դատախազությունը մեղադրում է հոգեւորականին թմրանյութերի հետ կապված հանցագործության մեջ: Ուրբաթ օրը Երեւանի դատարանը նրան երկու ամիս ժամկետով նախնական կալանքի տակ է վերցրել: Արքեպիսկոպոսի փաստաբանը մեղադրանքն անվանել է անհեթեթ»,- հաղորդում է KNA լրատվական գործակալությունը:

Այնուամենայնիվ, դիտորդները ձերբակալությունը մեկնաբանում են որպես կառավարության կողմից եկեղեցու ղեկավար, կաթողիկոս Գարեգին Բ-ի (74 տարեկան) դեմ պայքարում ձեռնարկված եւս մեկ քայլ: Խաչատրյանը (53 տարեկան) վեց ամսվա ընթացքում ձերբակալված չորրորդ եպիսկոպոսն է: Նա 2001 թվականից ի վեր կաթողիկոսի դիվանապետն է եւ նրա ամենամտերիմ մարդկանցից մեկը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մայիսի վերջին պահանջեց Գարեգին Բ-ի հրաժարականը՝ մեղադրելով նրան կուսակրոնության ուխտը խախտելու եւ երեխայի հայր լինելու մեջ: Եկեղեցին հերքում է մեղադրանքները՝ այն անվանելով «քաղաքական դրդապատճառներով հակաեկեղեցական արշավ»:

Գարեգին Բ-ն արդեն պահանջել էր վարչապետ Փաշինյանի հրաժարականը՝ 2020 թվականին, եւ այդ ժամանակվանից ի վեր կառավարության հակառակորդն է: Կաթողիկոսը Փաշինյանին մասամբ պատասխանատու է համարում Ադրբեջանի դեմ պարտված պատերազմից հետո Լեռնային Ղարաբաղից ավելի քան 100 հազար հայերի վտարման համար:

Հրավիրվել է արտակարգ խորհրդակցություն: Եկեղեցու առաջնորդն այժմ այցով գտնվում է Ֆրանսիայում: Ըստ KNA-ի, նա շաբաթվա սկզբին հրավիրել է եկեղեցու ղեկավարության եռօրյա արտակարգ խորհրդակցություն, որը նախատեսված է հաջորդ չորեքշաբթի՝ «քննարկելու Սուրբ Հայ Առաքելական Եկեղեցու շուրջ վերջին զարգացումները եւ Եկեղեցու ներքին կյանքին վերաբերող հարցերը»: Վերջերս ավելի քան 50 եպիսկոպոսներից տասը հրապարակավ կոչ արեց կաթողիկոսին՝ հրաժարական տալ: Նրանք գրել են, որ Գարեգին Բ-ի ներկայիս ընթացքը «հակականոնիկ, վտանգավոր, վնասակար եւ կործանարար է»:

Ինչպես այս շաբաթվա իր համարում հաղորդում է Արեւելյան եկեղեցիների (NÖK) լրատվական ծառայությունը, տասը հոգեւորականների հայտարարությունը հրապարակվել է նոյեմբերի 29-ին՝ «ArmTimes»-ում, վարչապետ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի կողմից ղեկավարվող առցանց հրատարակությունում: NÖK-ի տվյալներով՝ ստորագրողներից ութը նոյեմբերի 27-ին հանդիպել են Փաշինյանի հետ: Նրանցից մի քանիսը կապված են կոռուպցիոն սկանդալների հետ, իսկ մյուսները մեղադրվում են կուսակրոնության երդումը խախտելու մեջ: Ասում են, որ հոգեւորականներից մեկի ենթադրյալ երեխան բարձր պաշտոն է զբաղեցրել Փաշինյանի կառավարությունում:

Սկանդալային ռեփերի մասին վավերագրական սերիալ կնկարեն

Netflix-ը ներկայացրել է նոր վավերագրական սերիալ՝ սկանդալային ռեփեր եւ պրոդյուսեր Շոն Քոմբսի մասին, որը հանդես է գալիս P. Diddy ստեղծագործական կեղծանվամբ: Նա համարվում է ամերիկյան շոու բիզնեսի ամենաազդեցիկ պրոդյուսերներից մեկը: Սերիալը բաղկացած է չորս մասից: Այն նվիրված է այն աղմկահարույց քրեական գործին, որի արդյունքում P. Diddy-ն չորս տարվա եւ երկու ամսվա ազատազրկման դատապարտվեց՝ սեքսուալ շահագործման ու բռնության համար: Դատարանը նրան մեղավոր ճանաչեց ներկայացված մեղադրանքների մի մասով: Առավել ծանր հոդվածներով՝ երդվյալ ատենակալներն արդարացրին ռեփերին: Դրա շնորհիվ նա ցմահ ազատազրկման չդատապարտվեց: Սպասվում է, որ նա ազատության մեջ կլինի միայն 2028 թվականին: Վավերագրական սերիալը կոչվում է «Շոն Քոմբս. Հատուցում»:

Հատուկ ուշադրության է արժանի այն, որ նրա նախկին ընկերուհին՝ Կասանդրա Վենտուրան, որը նաեւ նրա դեմ հարուցված քրեական գործում մեղադրող կողմի հիմնական վկան է եղել, հրաժարվել է մասնակցել նկարահանումներին: Նա է հայտարարել բռնությունների, սեքսուալ շահագործումների, թմրանյութերի օգտագործման եւ այլ հանցադրվագների մասին: Վենտուրան ասել է, որ այդ ամենը վերահսկել է Քոմբսն ու ժամանակ առ ժամանակ էլ՝ մասնակցել: Սերիալում ներկայացված են այն անձանց հիշողությունները, ովքեր երկար ժամանակ եղել են P. Diddy-ի կողքին՝ մանկության ընկերներ, նախկին գործընկերներ, աշխատակիցներ ու նույնիսկ՝ սեքս-աշխատողներ, որոնք մասնակցել են նրա կազմակերպած «սեքս-մարաթոններին»: Նրանց պատմածների հիման վրա էլ ձեւավորվում է պատմություն այն մասին, թե ինչպես Հարլեմի բնակիչ տղան, որ մեծացել է առանց հոր, ձգտել է հասնել մի ողջ ինդուստրիայի բարձունքներին՝ աստիճանաբար ձեռք բերելով ամենաթողության ու անպատժելիության զգացողություն: Սերիալը ստեղծողները նշում են, որ ոչ Քոմբսը, ոչ նրա փաստաբանները չեն մասնակցել սերիալի ստեղծմանը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ «ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ» ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԴԺԲԱԽՏ ԵՐԵԽԱՆԵՐԸ. ՄԻ ԲԱՆԱՁԵՎԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԲԱՆԱՁԵՎ

Ինչպես հայտնի է, ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը դեկտեմբերի 3-ի հատուկ նստաշրջանում բանաձեւ է ընդունել, որով «Ռուսաստանից պահանջում է անհապաղ, անվտանգ եւ անվերապահ վերադարձնել բոլոր ուկրաինացի երեխաներին, որոնք բռնի դուրս են բերվել կամ տեղահանվել են իր զորքերի օկուպացրած տարածքներից»: Փաստաթղթում Ռուսաստանին կոչ է արվում դադարեցնել ուկրաինացի երեխաներին ստիպողաբար տեղահանելու, ծնողներից եւ օրինական խնամակալներից բաժանելու եւ նրանց կարգավիճակը, այդ թվում՝ քաղաքացիությունը փոխելու եւ որդեգրելու գործելակերպը, ինչպես նաեւ՝ անչափահասների գաղափարական մշակումը:

Բանաձեւը պաշտպանել է 91 երկիր, այդ թվում՝ ԱՄՆ-ն եւ Եվրամիության երկրները, Ուկրաինան եւ Վրաստանը: Դեմ է քվեարկել 11 երկիր, այդ թվում՝ Ռուսաստանը, Բելառուսը, Կուբան, Իրանը: 57 երկիր, այդ թվում՝ Չինաստանը, Հնդկաստանը, Հայաստանը եւ Կենտրոնական Ասիայի պետությունները, ձեռնպահ է քվեարկել: Ուկրաինայի իշխանությունների տվյալներով՝ լայնամասշտաբ պատերազմի սկզբից ի վեր Ռուսաստանն իր զորքերի օկուպացրած տարածքներից դուրս է բերել առնվազն 20 հազար երեխա, որոնցից ընդամենը շուրջ 1850-ին է հաջողվել վերադարձնել: Մոսկվան համաձայն չէ այդ թվերին, ինչպես նաեւ՝ «բռնի տեղահանում» ձեւակերպմանը՝ պնդելով, թե երեխաների դուրսբերումն իրականացվել է նրանց «անվտանգության ապահովման նպատակներով», եւ որ պատրաստ է նրանց վերադարձնել հարազատներին, եթե նրանք դա խնդրեն:

Դեռեւս 2023-ի մարտի 17-ին Հաագայի միջազգային քրեական դատարանը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին եւ երեխաների իրավունքների պաշտպան Մարիա Լվովա-Բելովային ձերբակալելու միջազգային օրդեր տվեց: Նրանք կասկածվում են ուկրաինացի երեխաների անօրինական տեղահանման մեջ: Թեեւ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի բանաձեւերը պարտադիր չեն կատարման համար, ի տարբերություն կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձեւերի, այդուհանդերձ, եվրաատլանտյան կուրս որդեգրած ՀՀ իշխանությունների այս որոշումը միանգամայն տարակուսելի է՝ հատկապես Մոսկվայի հետ վատթարացող հարաբերությունների ֆոնին: Մյուս կողմից էլ Եվրոպայի եւ ԱՄՆ-ի հետ «խաղեր տվող» Փաշինյանի ռեժիմի վերջին որոշումը՝ ձեռնպահ մնալ առեւանգված ուկրաինացի երեխաների վերադարձը պահանջող ՄԱԿ-ի բանաձեւի հարցում, այնքան էլ զարմանալի չէ, եթե հաշվի առնենք, որ այս իշխանախումբը նույնիսկ արցախցիների ճակատագրի եւ, որ ամենից ցավալին է՝ հատկապես հայ ռազմագերիների հարցում «ձեռնպահ» է մնում: Բայց նաեւ մի կարեւոր նրբերանգ. այս որոշման թիկունքում երեւում են նաեւ ԵՄ այն բյուրոկրատների «ականջները», որոնք, փաստորեն, ֆինանսավորում են Փաշինյանի արտաքին եւ ներքին քաղաքականությունը:

Ամենից թարմ օրինակը. դեկտեմբերի 2-ին Բրյուսելում ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 6-րդ հանդիպման շրջանակում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ու Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասը ստորագրել են համագործակցության նոր՝ ՀՀ-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի փաստաթուղթը: Այդ մասին հայտարարվեց Միրզոյանի, Կալլասի եւ ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսի համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ: Ավելի վաղ Եվրոպայի «երկաթե լեդիներն» ազդարարել էին, որ խոշոր գումարներ են «հոսելու» Հայաստան՝ այս դեպքում էլ վկայելով, որ նրանց «շուրթերով» Եվրամիությունը, ըստ էության, ֆինանսավորում է Փաշինյանի եւ իր խմբակի վերարտադրման հնարավորությունը՝ 2026 թ. խորհրդարանական ընտրությունների միջոցով: Դե, իսկ ԱՄՆ-ի ու անձամբ Թրամփի հետ ՀՀ գործող իշխանությունների ջերմ հարաբերությունների մասին էլ չենք մոռանում՝ վաշինգտոնյան համաձայնագրեր, Բաքվի հետ խաղաղության հռչակագիր, TRIPP եւ այլն: Ավելին, ԱՄՆ առաջին տիկին Մելանյա Թրամփը շարունակում է ակտիվ ջանքերն ուկրաինացի երեխաներին հայրենիք վերադարձնելու հարցում. ժամեր առաջ նա հայտարարեց, որ Պուտինի հետ անձնական նամակագրության եւ համալիր ջանքերի, համագործակցության արդյունքում՝ առեւանգված եւս մի քանի երեխայի Ռուսաստանը վերադարձրել է Ուկրաինային: Այնպես որ, պաշտոնական Երեւանի դիրքորոշումն այս հարցում կարող էր մի փոքր այլ լինել, եթե իսկապես «գլուխը թեքել» է դեպի Արեւմուտք եւ շարունակում է հաճոյանալ Սպիտակ տան ղեկավարի վարչակազմին:

Ընդհանուր առմամբ, սա վկայում է ոչ թե փաշինյանական ռեժիմի քաղաքական կամքի բացակայության, անվճռականության, ոչ կայուն ու տարերային արտաքին քաղաքականության մասին, այլ ընդհանրապես՝ որեւէ տեսակի կոնկրետ արտաքին քաղաքականության բացակայության:

ՀԳ. *Ի դեպ, ՀՀ իշխանությունները, որոնք ժամանակ առ ժամանակ ներկայանում են որպես երդվյալ «արեւմտամետներ», առաջին անգամ չէ, որ կարեւոր հարցերում դե ֆակտո քվեարկում են Ռուսաստանի օգտին: Սա՝ որպես արձանագրում, այլ ոչ թե որպես հանդիմանություն:*

Արա ԱԼՈՅԱՆ

...ՈՐ ՀԵՐՈՎԴԵՍ ՉԼԻՆԵՔ

Բաց նամակ ՀՀ կառավարությանը, վարչապետին ու ԿԳՄՄՆ-ին



Լեզու ունես, գիր ունես, գրականություն ունես, ուրեմն՝ ինքնություն ունես: Իսկ այսօր, ահա, փակում են գրականության շտեմարան-պահոցներից եւս մեկը՝ «Գրեթերթը»: Քանի՜ երիտասարդի համար է ինքնարտահայտվելու հարթակ եղել, գրական ճանապարհ հարթել, քանիսի՜ն է ասպարեզ մտցրել ու բարձրացրել... մինչեւ այն դռան շեմը, որից ներս մտնելով՝ հիմա ոմանք վճռում են «Գրեթերթի» լինել-չլինելու հարցը: Եվ կարծես վճռական են չլինելու հարցում: Պարոնայք եւ տիկնայք, հարգարժաններ, գրի եւ գրականության դեմ սուր ճոճելը հարգի չէ: Գրականության աշխարհի մարդիկ ոչ մի կառավարողի օրոք էլ միակարծիք չեն եղել իշխող կարգերի ու կառավարողների հետ: Մեզ բազմակարծությունն է հատուկ, «անտեսակետ Փիլո» լինելը մերը չէ: Եվ գրադաշտն այն տեղը չէ, որտեղ «ով մեզ հետ չէ»-ն պարտադիր մեր դեմ լինելն է: Այստեղ տարակարծությունն ու ընդդիմությունը միշտ հանուն-ի են: Զորօրինակ՝ հանուն բազմակարծության, որը ժողովրդավարական երկիրս հայոց ու նրա պետպաշտոնյաները, թվում էր, կրծքով պիտի պաշտպանեն: Եթե ոչ հանուն գրականության, գոնե հանուն իրենց, որ ժողովրդավարության բաստիոնի ժողկառավարություն է կոչվում՝ յուր միավորված ԿԳՄՄՆ-ով:

ՀԳ. *ԱԺ ամբիոնից մի ելույթի ժամանակ ԿԳ նախկին նախարար Արայիկ Հարությունյանն (օրվա կառավարության աշխատակազմի ղեկավարը) ասաց. «Այն ժամանակ ես ԿԳ նախարար էի, ՄՄ-ն դեռ չկար»: Չլինի՞ կառավարական կաբինետներում պատասխանատու որոշումներ կայացնողները ՄՄ-ն մի տեղ են դրել, ու «գերակշռում-թերակշռումների» արդյունքում միավորված (իմա՝ աներեւույթ դարձած) մշակույթի նախարարության պես հիմա էլ արդի հայ գրականության դարբնոցներից «Գրեթերթն» եք ուզում «արանքից հանել»: Անարգ բաներ մի՛ արեք, պարոնայք եւ տիկնայք կառավարականներ:*

ՀԳ. *Երբ մշակույթի նախարարությունը կցվեց մյուս երեքին, «Մարգահովիտի Զորավիգ» իմ խմբագրած թերթում գրեցի «Փակել ՀՀ մշակույթի նախարարությունը նույնն է, թե Հիսուս մորթեր այն էշին, որի վրա նստած հասավ Երուսաղեմ» վերտառությամբ հոդվածը: Թերթեր փակելով՝ այսօր կառավարողներն ավելի հեռուն են գնում: Զգո՛ւշ եղեք, տիկնայք ու պարոնայք, որ հանկարծ Հերովդես չդառնաք: Զգո՛ւշ եղեք, որ չնյութանաք գիր ու գրականությունը ճնշողներին:*

Հովհաննես ՍԱՐԴԱՐՅԱՆ
Արձակագիր

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է ՓՐԿԵ՞Լ ԲԻԶՆԵՍԸ

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Փաշինյանը եւ նրա քաղաքացիական կինը՝ Աննա Հակոբյանը, տեսնում են, որ իրենց հանրային վստահության ռեսուրսը ոչ թե զրո է, այլ՝ բացասական, մարդիկ ոչ թե անտարբեր են իրենց նկատմամբ, այլ ատում են իրենց, ինչի հետ իրենք ասոցացվում են, դառնում է զզվելի ու մերժելի: Եվ դրա մասին նրանք տեղեկացված են ոչ թե սոցհարցումներով, ոչ թե հանրային կարծիքի տարբեր ուսումնասիրություններով, այլ ավելի առարկայորեն, իրենց հետ ասոցացվող բիզնեսների նկատմամբ մարդկանց վերաբերմունքով, միայն իրենց հետ ասոցացվելը բավարար է, որ որեւէ գործ տապալվի, փակվի:

Մի քանի օր առաջ Աննա Հակոբյանը Ֆեյսբուքի իր էջում մի երկարաշունչ գրառում էր արել, որով հերքում էր իր կապը 88 խանութների ցանցի հետ: Մենք եւս գրել էինք, որ, ըստ շրջանառվող խոսակցությունների, Հակոբյանը կապ ունի այդ ցանցի հետ, որն անընդհատ ընդլայնում է իր աշխարհագրությունը, ընդ որում՝ ոչ թե նոր խանութներ են բացում, այլ ցանցին են միացնում արդեն գործող եւ հաջողակ խանութները: Մարդիկ ասում են, որ խանութների սեփականատերերի վրա հարկային եւ այլ կարգի ճնշումներ են գործադրում, որ նրանք իրենց գործող խանութը վարձակալության հանձնեն այս ցանցին, իսկ ճնշում կարող են գործադրել միայն իշխանության, այն էլ՝ բարձրագույն իշխանության ցուցումով եւ հրահանգով, այլ տարբերակ չկա: Ո՞վ է իշխանության այդ բարձրագույն ներկայացուցիչը, եւ որն է նրա շահագրգռությունը:

Բայց վերադառնանք Աննա Հակոբյանի գրառմանը. «Հայտարարում եմ, որ մեր ընտանիքը չի օգտվել եւ չի օգտվում «88» սուպերմարկետներից: Ես անձամբ երբեք չեմ եղել դրանցից որեւէ մեկում: Ես չգիտեմ՝ դրանք ինչ խանութներ են, որտեղ են գտնվում, ինչ որակի ծառայություն են մատուցում: Անկեղծ ասած, չեմ էլ պատրաստվում երբեւէ օգտվել «88» կոչված խանութներից: Ասածս ինչ է, ես ոչ մի բնույթի առնչություն չունեմ «88» սուպերմարկետների ցանցի հետ, անգամ որպես շարքային սպառող՝ դրանք ինձ խորթ են: Խնդրում եմ, մի՛ հավատացեք այս խանութի եւ իմ անվան հետ կապվող բամբասանքներին: Իսկ եթե ձեզ ամեն կերպ հավատացնում են, թե դրանք իմն են, ուղղակի բոյկոտեք եւ մի օգտվեք այդ ցանցից, մի շիշ ջուր անգամ մի գնեք «Աննա Հակոբյանի «88» սուպերմարկետներից»»:

Լավ, ենթադրենք՝ մարդիկ «88» անվանումն ունեցող խանութների ցանցը կապում են Աննա Հակոբյանի անվան հետ, է, կապում են՝ թող կապեն, ինչո՞ւ է Հակոբյանը փորձում հերքել իր կապն այդ ցանցի հետ, ինչի՞ն է ուղղված այս գրառումը: Նա անտարբեր չէ այս ցանցի նկատմամբ եւ փորձում է իրեն տարանջատելով այդ ցանցից՝ փրկել այդ խանութների ցանցը, փորձում է փրկել բիզնեսը, որն իրոք փրկության կարիք ունի:

Հակոբյանի գրառումից հետո անցած մի քանի օրվա ընթացքում խոսել եմ 88 դարձած խանութների աշխատակիցների հետ, հարցրել եմ, թե ինչպես է անդրադարձել իրենց գործունեության վրա, այսպես կոչված, վերաբրենդավորումը: Միայն բացասաբար՝վաճառքների անկմամբ: Խանութներ կան, որտեղ առեւտրի ծավալները կրկնակի ընկել են, խանութներ կան, որոնք դարձել են տնտեսապես ոչ շահավետ, եւ դրա համար սկսել են մեղադրել խանութների տնօրեններին, աշխատակիցներին՝ մեղքը բարդելով նրանց վրա, այն դեպքում, երբ նրանք այդ խանութում աշխատել են նաեւ մինչեւ վերաբրենդավորումը՝ մինչեւ 88 դառնալը, եւ հաջողությամբ: Խանութներ կան, որտեղ արդեն աշխատակազմեր են փոխվել, բայց՝ անարդյունք:

Պատկերացնո՞ւմ եք, Աննա Հակոբյանի անվան հետ ասոցացումն այնքան սարսափելի է, որ խանութներ կան, որոնք անցել են 88 ցանցի տիրապետության տակ, սակայն այն վախից, որ եթե խանութի անվանումը փոխվի, այն կարող է կորցնել իր հաճախորդներին, որոշել են խանութի անվանումը թողնել նախկինը, իբրեւ թե ոչինչ չի փոխվել: Բայց Հայաստանը փոքր երկիր է, Հայաստանի քաղաքներն ու գյուղերն ավելի փոքր են, մարդիկ ամեն ինչ գիտեն եւ տեղեկացված են եւ նույնիսկ այդ դեպքում մարդիկ աշխատում են հեռու մնալ այն խանութներից, որոնք կապվում են իշխող ընտանիքի անվան հետ: Աննա Հակոբյանն ասում է՝ բոյկոտեք իմ անվան հետ կապված խանութները: Պետք չէ կոչ անել՝ մարդիկ առանց այդ կոչի էլ բոյկոտում են այն ամենը, ինչը կապվում է ձեր եւ ձեր ընտանիքի անվան հետ: Այնպես որ, 88 խանութների ցանցը փրկելու այս հուսահատ փորձը եւս տապալվելու է:

Հարցը խանութների ցանցը չէ, այլ այն հանրային ատելությունը, որ կա կառավարող զույգի նկատմամբ: Մարդիկ, շարքային գնորդները՝ Երեւանում եւ ամբողջ Հայաստանում, չեն ուզում որեւէ առնչություն ունենալ այս ընտանիքի հետ, չեն ուզում, որ անգամ իրենց 10 կամ 100 դրամը գնա այս ընտանիքին, որը կործանել է, շարունակում է ոչնչացնել իրենց երկիրը, քաղաքն ու գյուղը: Մարդիկ պատրաստ են ավելի թանկ գնով ապրանք գնել ուրիշ խանութից, քան Փաշինյան-Հակոբյան զույգի հետ ասոցացվող խանութներից:

Հետո էլ ասում են, թե մարդիկ անտարբեր են իրենց երկրի ճակատագրի նկատմամբ, մի՞թե անտարբեր մարդիկ կարող էին նման հստակ վերաբերմունք դրսեւորել իշխանության նկատմամբ. դուք նույնիսկ մի խանութ չեք կարողանում կառավարել, ուր մնաց թե՝ մի ամբողջ երկիր:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 6.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԴԻՈԿՂԵՏԻԱՆՈՍԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Հռոմ, 286 թվական. հայոց ապագա արքա Տրդատը համբավավոր Կոլիզեյում 70 հազար հանդիսատեսի աչքի առաջ մենամարտում է կենդանիների արքա առյուծի հետ եւ հաղթում: Մենամարտին ներկա է Հռոմի Դիոկղետիանոս իմաստնագույն կայսրը, որը զգալով, որ անհնար է միայնակ կառավարել այդ կայսրությունը, այն կիսեց երկու հավասարազոր կայսրերի միջեւ, ովքեր կրում էին «Օգոստոս» տիտղոսը: Հետագայում հրաժարվեց իր բաժին գահից, սկսեց վարել մասնավոր կյանք՝ այգում կաղամբ ու բողկ աճեցնելով: Նա ուրախությամբ շնորհավորում է քաջազուն այրին եւ տեղեկացնում վաղուց սպասված լուրը՝ Հռոմը Նասիբինում պայմանագիր է կնքել պարսիկների հետ, որով պարսիկները հրաժարվում են Հայաստանի նկատմամբ նկրտումներից եւ չեն առարկում Հայաստանում Տրդատի գահակալության դեմ: Ապա իրեն թույլ է տալիս խորհուրդներ տալ հռոմեական ժողովրդի եւ Սենատի բարեկամ երկրի տիրակալին: Խորհուրդներ, որոնք չեն կորցրել իրենց թարմությունն ու ճշմարտացիությունը հետագա բոլոր ժամանակներում:

«Եթե հարկ լինի ընտրություն կատարել խայտառակության եւ պատերազմի միջեւ, առանց հապաղելու՝ ընտրիր պատերազմը, քանզի եթե ընտրես խայտառակությունը, ապա, միեւնույն է, պատերազմ եւս կստանաս»,- ասել է կայսրը, եւ այս խոսքերն են հետագայում վերագրվել Չերչիլին: Հիմա ասացեք. մենք՝ ազգովի ո՞րն ընտրեցինք: Մենք պաշտպան կանգնեցի՞նք թուրքի երախում մեր իսկ մեղքով հայտնված մեր անպաշտպան հայրենակիցներին, անվտանգ հեռվից (առաջին հայացքից՝ անվտանգ) չե՞նք դիտել, թե ինչպես են անպատվում, խողխողում, հայրենազրկում իրենց բնօրրանում խաղաղ ապրող բազմահազար արցախցիներին: Կարո՞ղ էինք օգնել: Հարկավ՝ դժվար էր: «Ազերբայջան» անունով խունտան մեր անգործության, թուլակամության, անհեռատեսության պատճառով աստիճանաբար տիրեց ու զենքով ամրապնդեց իր դիրքերն Արցախում, ճանապարհներին, ձյունառատ սարերում: Այո, այն ձյունառատ սարերում, որոնք, այսօրվա «կառավարչի» կարծիքով, մեզ բոլորովին պետք չեն: Դժվար էր, բայց, համոզված եղեք՝ ոչ անհնարին... Դրա պատճառների մասին էլ է հռոմեացի Դիոկղետիանոսն ասել մեր Տրդատին:

«Մենք՝ երկրի տիրակալներս, պետք է լինենք կենդանի մարմնացումը մեր ժողովուրդների բոլոր արժանիքների եւ ոչ՝ թերության, թուլության: Այդ բեռը հարմար է միայն աստվածների ուսերին, դժբախտաբար, այն պետք է կրի ընդամենը մարդը»: Եկեք խորհենք՝ մեզանում ինչպե՞ս է եղել 32 տարի, ինչպե՞ս է այսօր: Ունեցել ենք եւ ունենք երկրի ղեկավարներ, որոնց թվում է, թե իրենք մարմնավորում են ժողովրդի բոլոր արժանիքները, զերծ են թերություններից, իրենք Աստված են:

Շարունակենք լսել կայսրին. կառավարելու համար երկրի ղեկավարը պիտի իրեն շրջապատի ոչ թե նիզակներով (այսօր՝ ոստիկանական ուժերով), այլ՝ համընդհանուր սիրով: Ունենալով այդ սերը՝ պիտի զգուշանալ այդ սիրուց: Այն վտանգավոր է, գլխապտույտ է առաջացնում, ինչը հատուկ է եղել մեր երկրի բոլոր կառավարիչներին անխտիր: Այո, իշխանությունը մեծ առավելություններ է տալիս մարդուն, այդ պատճառով սրիկաները կառչում են դրանից, ինչպես տիզը: Երկրի տերն իրենից պիտի հեռացնի քծնողներին՝ հոգեկան բորոտություն տարածողներին: Թույլ շրջապատ ընտրելով՝ իշխանավորը մահվան է դատապարտում իրեն (հավելենք՝ նաեւ իր ժողովրդին), քանզի փորձության ժամին հենարան չի ունենում:

Մի միտք էլ. «Հաճախ եղնիկի ղեկավարած առյուծների բանակը ջախջախվում է առյուծի ղեկավարած եղնիկների բանակից»: Մի՞թե այդպիսի «առյուծ» ղեկավար, հրամանատար ունենալու ժամանակը չի եկել: Վաղուց է եկել: Վերջին միտքն էլ թող հնչի մեծանուն Հրանտ Մաթեւոսյանից. «Քոնն ուրիշին չտա՛ս: Ինչքան տվեցիր՝ տանելու են, ինչքան տարան՝ խփելու են, ինչքան խփեցին՝ ուժեղանալու են, ուժեղացան՝ քամահրելու են...»: Դե, այսօր այդպես էլ անում են: Իսկ մենք լուռ ըմբոշխնում ենք այդ հրեշավոր իրականությունը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am